

ՃԵՐ ԱԿՏԵՐՆԱԽՈՐՀ

ԲՈՒՋ  
Ֆ

ԿԱՏԱՐՎԱՄԵՄ  
ՖԵՎՐՈՓԵՎՐՈՆԵՄ

ՊԵՏՐՈՎ

ԳԱՐԱԲԱՆԻ ԳՐԱՎԱԼՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1938

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՆ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՈՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

ԱՍՈՒԹՎԱՆ է 1961 թ.

ՁԵ. ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ

# Ի՞նչ է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Միջազգային ժեսուրյուն



ՊԵՏԱԿԱՆ

ԳԱՂԱԲԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1938

A II  
9931

Я. АЛЕКСАНДРОВ  
ЧТО ПРОИСХОДИТ В ЕВРОПЕ?

Армгиз—Издательство  
полит. литературы  
Ереван—1938

## ԼՈՆԴՈՆԻՑ ՏՐՎԱԾ ԶԱՐԿԵՐ

Հետապատերազմյան կապիտալիստական Յեվրոպան կրիտիկական որեր և ապրում։ Հաշտության պայմանագրերով սահմանված կարգը լիսկատար խորտակման յենթարկվեց։ Բուրժուական դիպումատիան մնանկացավ։ Կապիտալիզմի ամենասանձարձակ, ամենառեալիցին ուժերը մոլեզնում են Յեվրոպայի կենտրոնում, իսկ այն պետությունները, վորոնք գեռես պահպանել են բուրժուամբուլատական կարգի մնացորդները, ֆաշիստական ադրեսուների հանդեպ կապիտուլացիայի յեն յենթարկվում։

Յեթե չհայտարարված պատերազմը դեռևս վերջերս ծավալվում էր Յեվրոպայի հարավ-արևմուտաքում և Հեռավոր Արեգելքում, ապա վերջին ժամանակներս վտանգ առաջացավ, թէ աղքեսորները ռազմական յելույթ կունենան միանգամից Յեվրոպայի միքանի կետերում։ Այսպիսի սիտուացիա կազմվեց այն բանից հետո, յերբ գերմանական Փաշիզմը գրավեց Ավստրիան և վոչ-յերկիմաստորեն սպառնում է Գերմուզվակեային։

Յեվրոպայում կատարվող վերջին դեպքերն ըմբռնելու համար դիմենք այդ զեպքերին նախորդող յերկու փաստի. 1938 թ. փետրվարին Իդենի հեռանալն Անգլիայի արտաքին գործերի միահարի պոստից և հենց նույն այդ որերին Հիտլերի յելույթը ռայխստագում։

Մեր մամուլը ճիշտ գնահատեց Իդենի հրաժարականը՝ վորպես բրիտանական արտաքին քաղաքականության ծրագրի փոփոխություն։

Այժմ կարելի յե ճշտորեն հաստատված համարել, վոր Փաշիստական իտալիան ու Գերմանիան—Մուսոլինին ու Հիտլերը—վոչ-յերկիմաստորեն հասկացրին բրիտանական կառուլարությանը, վոր իրենց հետ խաղ խաղալու և համաձայնության գալու քաղաքականությունը, վոր սկսել եր բրիտանական կոնսերվատորների վերնախավը, հաջողություն կունենա Իդենի հրաժարականի դեպքում միայն։ Աղքեսորների ցանկությունները կատարվեցին:

անառարկելիորեն։ Նելիլ Զեմբեռլենը, ինչպես գրում եր անգլիական ուղղղիցիոն մամուլը, պետական պոպուլար գործչին զոհաբերեց։ Յեվրոպայում պատերազմ պատրաստող Փաշխատական յերկու դիկտատորների անմիջական պահանջի համաձայն։ Բանը, իհարկե, իդենի անձնականի մեջ չե, այլ առավել խորն այն պատճառների մեջ, վորոնք բնորոշվում են գեղի Փաշխատական ազրեսորներն Անդիայի ունեցած վերաբերմունքով և անգլիական իմպերիալիզմի վոչ միայն արտաքին, այլև ներքին քաղաքականության մեջ տեղի ունեցած լուրջ փոփոխություններով։

Զեմբեռլենն ու իր ռեակցիոն շրջապատը ձգտում են իրականացնելու մոնոպոլիստական կազմիտալի պրոֆաշխատական խմբավորումների ծրագիրը։ Զեմբեռլենի կարինետի քաղաքականությունը բնորոշվում է յերկու հիմնական մոմենտներով։ Դախի՝ մոնոպոլիստական կազմիտալի պարագիտական վերնախավիի համար յեկամուտներն անարգել կերպով ստանալը և այդ նպատակով յեկամուտների գլխավոր աղբյուրը—բրիտանական իմպերիան պահպանելն ապահովելու ցանկությամբ։ յերկրորդ՝ Փաշխատական պետություններին ակտիվ կերպով ոգնելու, նրանց խորտակումը թույլ չտալու ձգտմամբ։

Հետապնդելով այս նպատակները, Զեմբեռլենի կառավարությունն արտաքին քաղաքականության մեջ տատանումների ու զիգզագների տակտիկայից անցալ Փաշխատական ազրեսորների հետ ուղղակի կերպով համաձայնելուն։

Սենացիաների սիրահար բուրժուական լրագրերը պնդում ելին, այն ել վո՞չ առանց հիմքի, վոր իդենի հրաժարականը վորոշված եր կլայվդենում։ Աստորների կաներավատիլ ընտանիքի կարմածքում։ Անգլիայում կլայվդենը վոչ միայն աշխարհագրական անուն է, զա քաղաքական հասկացողություն է։ Զուր չե, վոր ռեակցիոն պրոֆաշխատական «կլայվդենյան կլիկան» «անեգալ կարինետ» անունն է կրում։ Թերես այսեղ չափազանցության վորոշ մասնիկ կա, սակայն բրիտանական արտաքին քաղաքականության մեջ անդրկուլիսային ինտրիգների աղղեցությունները միանգամայն ակնհայտ են։ Պատմում են, որինակ, վոր Աստորների կլայվդենյան տանն է վորոշվել Գալիֆաքսի ուղեռորությունը թեռլին։

Լեդի Աստորն ինքը համայնքների պալատի անդամ է։ Նրա ամուսին Վիսենտ Աստորին ե պատկանում «Ուսերվեր» կոնսերվատիվ լրադիրը։ Լեդի Աստորի վորդին համայնքների պալատի

անդամ եւ : Լեղի Աստորի տամուսնու յեղբորը՝ պառլամենտի անդամ մայոր Զոն Աստորին եւ պատկանում «Թայրմ» լրադիրը, վորը վագուց արգեն կամպանիա յեւ մզում Փաշխտական Գերմանիայի հետ մոտենալու ոգտին :

Միլիոներներ Աստորների տանը իրենց համար ապաստան են դանում Յեղուպայի Փաշխտական ռեակցիայի հետ աշխատակցելու վաղուցվա կողմնակիցները, մասնավորապես այնպիսի գեմքեր, ինչպես Փինանսների մինիստր Զոն Սայմոնը. ներքին գործերի մինիստր Սամուել Խորը, վորն ամեն հնարավոր բան արեց, վորպեսպի խափանի 1935 թ. սանկցիաներն ընդդեմ իտալիայի. «Որսերվեր» լրադիրի խմբադիր Գարվինը, մի լրադիր, վորը պաշտպանում եր Փաշխտական Գերմանիայի շահերը, և, վերջապես, պողպատի արքա Բալֆուրը, վոր չեր քողարկում իր համակրանքը դեպի Հիտլերը: Վերջերս Բալֆուրը բացարձակութեան հայտարարեց. «Մենք պարտավոր ենք ոգնել Գերմանիային զինվելու բոլցելով դեմ վարելիք պայքարի համար»:

Այս կլիմայի խորհրդակցություններին մի անդամ չե, վոր մասնակցություն և ունեցել չամսանսկի արտադրող Փիբրմայի նախկին կոմի-վորաժոր, իսկ ներկայումս գերմանական արտաքին գործերի մինիստր Ռիբբենտոռովը: «Կլայվենյան կլիմայի» մեջ է մտնում նաև Անգլիական բանկի նախագահ Մոնտեգյու, Նորմանը, Շախտի անձնական բարեկամը:

Այս ռեակցիոն լորդերը, արիստոկրատ քաղաքագեներն ու Փինանսական գործարարները խրախուսում են Անդլիայի արտաքին քաղաքականության նոր կուրսը, վոր ուղղված է դեպի աշխատակցություն Փաշխտական Գերմանիայի հետ, մասնավորապես՝ Փաշխտական Գերմանիայի հետ: Նրանք խաղում են անդլիական «կազուլյարների»—պառլամենտական դեմոկրատիայի դեմ դավադրություն սարքողների դեր:

«Կլայվենյան կլիման» ռեակցիայի գրոշների ներքո յեւ հավաքում բոլոր հակադեմոկրատական ուժերին՝ անկախ նրանց կուսակցական պատկանելությունից: Այսուղ են, դրում ե «Լեյլոր Մոնալին» 1938 թ. Հունվարին,—Գարվինի տիպի մաշված ռեակցիոններներ, մոսլիականներ «Ենյի Մելլից», տորի-մինիստրներ, լեգիներ հասարակության վերին խավերից, Անգլիական բանկի մագնատներ, Ռիբբենտոռովի հայկատակներն ու գերմանական Փաշխտաների աղենտներ, պրոֆաշխտական «լիբերալներ» ու «պացիֆիստներ», այսպես կոչված «բանվոր լորդեր»

Լոտիենները, Ալենները, Առնոլդները: Մրանք ամենքը միավոր-վում են ծայրահեղ ռեակցիայի հետ՝ «արդարություն Հիսու-բի համար» լոգունդի ներքո:

Զեմբեռլենի ռեակցիոն կառավարության պրոֆաշխտական կուրս առանձնապես վորոշակիորեն արտահայտվեց Անդլիայի արտաքին քաղաքականության մեջ: Սակայն կառավարությունն իր ռեակցիոն եյտությունը մերկացրեց նաև ներքին քաղաքակա-նության մեջ, թեկուզ և Զեմբեռլենի կարինետը ջանում և պահ-պանել «բարեկարգ» բուրժուական դեմոկրատիայի տեսք: Բե-րենք միքանի իլլուստրացիա:

Լորդ Գալիֆաքսին արտաքին գործերի մինիստր նշանակելը բնորոշ և Անդլիայի արտաքին քաղաքականության վոչ միայն նոր կուրսի համար: Գալիֆաքսը՝ վորպերի լորդերի պալատի անդամ, չի կարող հանդես գալ համայնքների պալատում և, հետեւապես, պալամենտի առջև պատասխանավություն չի ստանձնի իր քա-ղաքականության համար: Միջադրային դրության վերին աստի-ճանի սրվածության մոմենտին մոնոպոլատական կապիտալի պրոֆաշխտական խմբի ռեակցիոն կլիկայի կամքով մինիստր գործազի քաղաքական մի գործիչ, վորը չի կարող պատասխանա-տու լինել պառլամենտի առջև: Մինչդեռ, համաձայն անդլիական տիրահռչակ տրադիցիաների, համայնքների պալատին և պատկա-նում վճռատկան խոսքը արտաքին գործերի մինիստրության քա-ղաքականության բնորոշման մեջ: Յեկ յեթե Նեկիլ Զեմբեռլենը համայնքների պալատում հանդես և գալիս արտաքին քաղաքա-կանության հարցերի առթիվ, ապա այդ վոչ թե նրա համար, վորպեսզի պատասխանի պառլամենտի իրավունքները, այլ ընդհա-կառակար, վորպեսզի հանրապետություն ունենա անձամբ խափա-նելու ոպողիցիայի յելույթները:

Սա փոքր փաստ և, բայց սա մատնանշում և ֆաշխտական անդլիանցները անդլիական ներքին քաղաքականության մեջ:

Անդլիական բուրժուազիայի զեկավար վերնախավում տիրող պրոֆաշխտական ներքին քաղաքական տենդենցների մի այլ հե-տաքրքրական իլլուստրացիան են հանդիսանում այն հնարքները, վոր կառավարական խմբավորումը գործ եր զբել, վորպեսզի թուլացնի ոպողիցիային: Յերբ անդլիական արտաքին քաղաքա-կանության նոր կուրսի առթիվ դժգոհությունը լիբրուխտական ու լիբերալ կուսակցությունների շարքերից անցավ կոնսերվատիվ մեծամասնության շարքերը, կոնսերվատիվ կուսակցության ծայ-

զահեղ աջ շրջանները, վորոնք իրենց ձեռքին ելին պահում կու-  
սակցական ամբողջ ապարատը, իրենց չարքերում յեղած ոսպոդի-  
ցիային հանդարտեցնելու համար դիմեցին յուրահատուկ արգու-  
մենտների:

Կոնսերվատիվ կուսակցության տերերը խոռվարար «յերի-  
տասարդ կոնսերվատորներին» մոտավորապես հետեւալն ելին  
ներշնչում։ յեթե արտաքին քաղաքականության կուրսի կապակ-  
ցությամբ Զեմբեռլենի կառավարության ճգնաժամ վրա հասնի,  
ապա պատրամենտը կարձակվի և նոր ընտրություններ տեղի կու-  
նենան։ Այդ ընտրությունների ժամանակ լեյբորիստները, ան-  
կասկած, կարող են նշանակալից մեծամասնություն ստանալ։  
Համենայն դեպս կասկածի յենթակա չե, վոր լեյբորիստները  
պառլամենտում 60 կամ 70 տեղ կշահեն ի հաշիվ կոնսերվատոր-  
ների։ Այսպիսի հեռանկարի կանխատեսությամբ կոնսերվատիվ  
կուսակցության դեկալարությունը բոլոր անհրաժեշտ միջոցնե-  
րը ձեռք կառնի, վորպեսզի Զեմբեռլենի քաղաքականությունից  
դժգոհ կոնսերվատիվ պատրամավորները կորցնեն այդ տեղերը։

Կլայզլենի ու Սիտիի Մեֆիստոֆելները «յերիտասարդ կոն-  
սերվատորներին» այսպես ելին սպառնում։ յեթե դուք Զեմբեռ-  
լենի դեմ խոռվություն բարձրացնեք, դուք, կարող ե պատահէլ,  
կառավարության ճգնաժամ կառաջացնեք, սակայն դրա վորխա-  
րեն կկորցնեք պառլամենտի ձեր տեղերը։

Այս փաստարկներն, ըստ յերեւութին, դոնե տվյալ ետա-  
պում, վորոշ դեր խաղացին։

Հրաժարական տված Իդենն ամեննեին ել խաղաղության մար-  
տիկ, կունկտիվ անվտանգության հետեւղական պաշտպան չի  
հանդիսանում։ Իդենը, վոր անգլիական յերիտասարդ կոնսերվա-  
տորների խմբի ներկայացուցիչներից մեկն եր, արտաքին քաղա-  
քականության մեջ ամբողջովին յենում եր անգլիական բուր-  
ժուազիայի շահերից և վոչ պակաս, քան ների Զեմբեռլենը,  
մտահոգված եր բրիտանական խմբերիալիզմի շահերի պաշտպա-  
նությամբ գաղութներում ու դոմինիոններում։ Իդենը վարում եր  
տատանվող, բավականին վոչ-հետեւողական քաղաքականություն,  
նա խսպանական գործերին չմիջամտելու խայտառակ կոմեդիայի  
կազմակերպիչներից մեկն եր, Սակայն նա ներկայացնում եր  
անգլիական բուրժուազիայի այն մասի հայացքները, վորը գտնում  
է, վոր Անդլիայի աղդային շահերը ներկա պայմաններում համ-  
ընկնում են խաղաղության շահերի հետ, և առարկում եր Հիտ-

Երի ու Մուսոլինիի հետ ուղղակի կապիտուլանտական համաձայնության դաւականության գլուխ է իդենի քաղաքականության դևականության գլուխ յեկավ Անդիմայի կառավարող ուեակցիոն շրջանների համար:

Վոչ միայն անդիմական, այլև միջազգային խոշոր մոնոպոլ տրեսուների հետ սերտորեն կապված Փաշիստացող լորդերն ու բորսային գործարարները վճռեցին համաձայնության դավ Փաշիստական ուղեսուներին ուղղակի խրախուսել՝ ի՞նչ խարեյության և անդիմական ժողովրդի կամքի վրա դործադրվող ի՞նչ բռնության գնով ել վոր լինի: Դրանից ավելին՝ բրիտանական կոնսերվատորները բավական ակտիվորեն փորձում են խախտել ֆրանսական ժողովրդի կամքը: Կասկածի յենթակա չե, վոր Նեվիլ Զեմքեռլենի խումբը յեռանդուն մասնակցություն ե ցուցաբերում ֆրանսական ուեակցիայի սրայքարին ընդդեմ ժողովրդական ֆրոնտի: Արդեն վաղուց հայտնի յե, վոր ֆրանսական ֆրանկի տատանումներն ու նրա կուրսի անկումը, վոր ամեն անդամ վրա յե հասնում, յերբ ժողովրդական ֆրոնտի վրա հենվող կուսակցությունն անցնում է Եւլսանության դրուխ կամ անց ե կացնում ժողովրդական ֆրոնտի քաղաքականություն, հանդիսանում են վոչ միայն ֆրանսական, այլև անդիմական ֆինանսական շրջանների հանցագործ խաղի հետեւանք:

Ֆրանսական ուեակցիայի ներկայացուցիչները ժողովրդական ֆրոնտի գեմ մղած իրենց սրայքարում լրայն աշակցություն են ստանում կոնդոնի Սիտիի կողմէից: Վերջին ժամանակներս բրիտանական կոնսերվատորները ֆրանսական ներքին քաղաքականության իրենց չխառնվելու մեջ ե'լ ավելի հեռու զնացին: Զեմքեռլենի կոնսերվատիվ կատավարությունը զանազան միջնորդի ոգնությամբ—սկսած ֆինանսական ճնշումից ընդհուպ մինչև Փարիզ և միասարներ ուղարկելը—ձգտում ե ֆրանսիայում այնպիսի կառավարություն կազմելուն, վորը կախում չունենա ժողովրդական ֆրոնտից, այսինքն՝ ֆրանսական ժողովրդի կամքից:

Բլյումի կարինետի անկումն ուղղակի հետեւանք եր ուեակցիայի նկրառումների: Բլյումը հրաժարական ավեց այն պատճառով, վոր սենատը, վորը ֆրանսական ժողովրդի կամքը չեր արտահայտում, ձախողեց նրա ֆինանսական որինագծերի անցկացումը:

Բլյումի կառավարությանը վոխարինելու յեկավ Դալաղյեյի

կարինետը, սակայն այնուամենայնիվ անորոշ և մնում, թե ինչ չափով այդ կարինետը կրավարարի Փրանսական ռեակցիային ու նրա լողոնյան դաշնակիցներին։ Քրիտանական կոնսերվատորները կուգենային, վորպեսզի Փրանսական կառավարությունը վերջնականապես հեռանար ժողովրդական Փրոնտի քաղաքականությունից, կունկիտիվ անվտանգության քաղաքականությունից, վորով ծայրահեղ կերպով շահագրգուված և Ֆրանսիան, և անվերաբահորեն նպաստեր՝ պատերազմի հրձիգների հետ համաձայնության դալու բրիտանական քաղաքականությանը։

Քրիտանական խմբերիայի բախտը տնորինողները, պատերազմի ֆաշիստ կազմակերպիչների հետ համաձայնության դալով, բռնանում են իրենց ժողովրդի կամքի վրա և ուղում են Փրանսական ժողովրդի վոտքն ու ձեռքը կապել։ Այս տակտիկան բարում և խորական ու գերմանական ֆաշիզմի հետ համաձայնելու քաղաքականության հենց եյտւթյունից։

Ֆաշիզմը—դա ժողովրդի ամենավլուերիմ թշնամին է։ Յեթե յեվրոպական վորեւ յերկրի կառավարություն համաձայնության և դավիս պատերազմի, բարբարոսության և խավարամոլության ֆաշիստական ուժերի հետ, ապա նա անխուսափելիորեն կանգնում և իր յերկրի ֆաշիզման ուղու վրա, իր ժողովրդի շահերին դավաճանելու ուղու վրա։

## ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱԼ ԻՍՊԱՆԻԱՅՈՒՄ

Այսպիսով, բրիտանական կոնսերվատորները նոր զարկ տվին առջեստայի ակտերին Յեվրոպական հետեւանքներու—իտալո—գերմանական ինտերվենցիայի հսկայական ուժեղացումը իսպանիայում, Ավոտրիայի գրալումը Գերմանիայի կողմից, Գերմանիայի ճնշումը գործ գնելը Զեխոսլովակիայի վրա և Լիտվայի լեհական շանտաժը։

Անդիլիական կառավարության կուրսը փոխվելուց անմիջապես հետո Հիտլերն ու Մուսովինին իսպանիա փոխադրեցին հսկայական տեխնիկական ուժեր, մոտորացված դիվիզիա, ավիացիա և լուրջ հարձակում ծավալեցին արագոնյան Փրոնտի վրա, ձգտելով ճեղքելանցնել գեպի Միջերկրականի ծովեզերքը, Կատալոնիան կտրել հանրապետական իսպանիայի մնացած մասից և Լեռիդայի վրա կատարելիք միաժամանակյա հարձակմամբ Կատալոնիան ծունկի բերել։ Խոռվարաբներին ու ինտերվենտներին հա-

Ըողվեց գրավել Վենաբռուը և կտրել Կատալոնիան համբավետական կանոնիայի մնացած մասի հետ միացնող յերկաթուղարյին ու խճուղային ճանապարհները: Սակայն նրանց չհաջողվեց կոտրել Կատալոնիայի դիմադրությունը, չնայելով այն ըանին, վոր գեղողի Կատալոնիայի մայրաքաղաք Բարսելոնան տանող ուղղության վրա գտնված բոլոր խոշոր քաղաքներն ու բնակավայրերը (Ֆրագա, Լերիդա, Գանդես, Տորտոս և Մորելյա) Փաշիատների հրետանու և ավլիացիայի կողմից վերածված են ավերակների մի կույտի, իսկ Բարսելոնան յենթարկվում է ամենակատաղի ոմբակոծությունների: Խոպանական ժողովրդի գեմ են նետված ռազմական խոչորադույն ուժեր և իմպերիալիստական յերկու պետությունների՝ Գերմանիայի և Իտալիայի ամենաժամանակակից ռազմական տեխնիկան:

Կատաղի ինտերվենցիայի այս սանձարձակությունն ամենենին ել չի վրդովում բրիտանական քաղաքականության դեկավարներին: Ընդհակառակը, նրանք կեղծավորաբար հայտարարում են, թե իրենց վոչինչ հայտնի չե խոպանիայի քաղաքացիական պատերազմին Գերմանիայի և Իտալիայի կողմից ցուցաբերած միջամտության մասին:

Բրիտանական կոնսերվատորները վոչ միայն վարում են «չմիջամտելու» գավաճանական քաղաքականություն, վորը Փաշիստաներին ճնարավորություն ե տալիս ինտերվենցիա ծավալել խոպանիայում և մի թերեւ ել սպառնալ անդլիական դաշնակցին—Ֆրանսիային: Բոլոր հիմքերը կան յենթարկելու, վոր բրիտանական կառավարական շրջանները այժմ ամբողջությամբ կողմնորոշվում են դեպի ֆրանկոյի հաղթանակը:

Այսպիսի քաղաքականություն անցկացնելով, Նեվիլ Չեմբռուլենն ու իր կուեգաները միթարժում են այն միամիտ նկատառումներով, թե իրը Ֆրանկոյի հաղթանակից հետո իրենց կհաջողվի գերմանական ու իտալական դորքերը հետ կանչել խոպանիայից: Լոնդոնյան Սիտին հույսը դնում ե այն բանի վրա, վոր գեներալ Ֆրանկոն կհրապուրի անդլիական դրամապարկերով: Բայտ յերեսութիւն, այդ և պատճառը, վոր այնպիսի կոնսերվատիվ քաղաքազեններ, ինչպես, որինակ, Պեյջ Կրոֆտը, անգլիական բանկերի թելադրանքով Ֆրանկոյին ամվանում են «իր խոսքին տե՛ր քաջ քրիստոնյա և ջենալմեն»: Պետական գավաճանի, ծախվող գեներալի, հարբեցողի, Հռոմի ու Բեռլինի անմիջական ագենտի հացեյին ասված այս կոմպլիմենտները պետք

և գիտել վորապես պըսիմ կտիլ ռեկլամ՝ արված լոնդոնյան բանկերի կողմէց գեներալ ֆրանկոյին, վորին նրանք ցանկանում են վոխ տալ անդիմական ավանդատունների գրամմերը:

Գեներալ ֆրանկոյին, իհարկե, կարելի յե գնել: Այս «քաջ քրիստոնյան ու չենտրոնը» պատրաստ է վրամ վերցնել ամենքից, ով կտա: Սակայն ի՞նչ հիմքեր կան յենթագրելու, թե Գերմանիան ու Խոտալիան հաշվի կառնեն Սիտիի կողմէց գեներալ ֆրանկոյի վրա կատարած գրամական ծախսումներն ու կհրաժարվեն Պիրենեյան թերակղզու վրա գրաված իրենց գիրքերից:

1937 թվականի հունվարին Մուսուլմանին չենութենական համաձայնություն կնքեց Անգլիայի հետ՝ Միջերկրական ծովի արեւտյան մասում գոյություն ունեցող գրություննը պահպանելու մասին, և հենց անմիջապես դրանից հետո խոպանական նավահանգիստ կաղիքատում 10-հազարանոց խոտալական գեսանոտ ափ իջնցվեց: Հիտլերը խոստացել եր պահպանել Լոկարնոյի դաշնադիրը, սակայն շատ շուտ խախտեց այն, զորքեր մտցնելով Հռենոսի ապառազմականացված զոնան: Գերմանիան ապահովեց Ավստրիայի անկախությունը և դրանից անմիջապես հետո իր զորքերով Ավստրիան ոկուլազիայի յենթարկեց:

Յեթե Փաշիստներն այդպես հեշտությամբ խախտում են իրենց զորքերն ուրիշի հողը չմտցնելու իրենց խոստումը, ապա ի՞նչ հիմքեր կան յենթագրելու, վոր նրանք վորեն յերկրից հետ կկանչեն իրենց զորքերը, յեթե նույնիսկ տան ել այդպիսի պարտավորություն:

Հույս զնել այն բանի վրա, թե Պիրենեյան թերակղզու վրա հաղթանակ տանելու դեպքում Գերմանիան ու Խոտալիան կմաքրեն իրենց գրաված տերիտորիան, —դատարկ իլյուզիաներ ու ցիսիկ խարելություն ե: Այդ իլյուզիաներին հակամետ չեն նույնիսկ ֆրանսական այն քաղաքագետները, վորոնք այնպիսի պատրաստականությամբ գլխով հավանության շարժումներ են անում, ունկնդրելով Լոնդոնից արվող խրատներին:

Ավստրիայի գրավումն ու Խոպանիայում ստեղծված դրությունը Փրանսական դիմումատիային դրդեցին Լոնդոնի առջև զնելու մի շարք փափկանկատ հարցեր: Ֆրանսական բութուական քաղաքագետները մոտավորապես այսպես են ձեւակերպում իրենց հայեցակետը անդիմացիների հետ վարած բանակցություններում, այժմ հարցը նրանում չե, թե Ֆրանկոն կհաղթի, թե վոչ, այլ նրանում, վոր Ֆրանսիայի արեւություն, Պիրենեյան

լեռների մոտ, ստեղծվում է գերմանո-իտալական մի բոունցք։ մինչև վերջին ժամանակներս մենք կարծում ենք, վոր մի առանձին գժբախտություն չի լինի, յեթե Ֆրանկոն հաղթի, վորովհետև այնքան ել շատ չենք համակրում հանրապետական Իոպանիային, սակայն այժմ, յերբ Գերմանիան սպառնում է բռնագրավել Զեխոսլովակիան, վերին աստիճանի վտանգավոր է գերմանո-իտալական ինտերվենտների հաղթանակն իսպանիայում։

Այս կերպ գատելով, Փրանսական քաղաքագետներն ու գլխավոր շտաբը, կարող ե պատահել, առաջին հերթին արտահայտում են վերին աստիճանի վորոշակի ցանկություններ։ Թե ինչի մասին ե խոսքը, կարելի յե դատել ըստ Փրանսական տապավել լուրջ քաղաքական գործիչների հրապարակած միքանի արտահայտությունների։ Այսպես, որինակ, Փրանսական գիներալ Արմաններն «Երոպ Նուվել» ժուռնալում (ընթացիկ տարվա մարտի 26-ի համարում) գրում եր հետեւյալը.

«Կարո՞ղ ենք արդյոք մենք հույս գնել խոստումների վրա, յերբ քիչ առաջի գեղեցերը մեզ նորից ցույց տվին, թե ինչ արժեն միջազգային պարապությունները։ Միայն ունեալ յերաշխիքները գին ունեն։ Մինչդեռ, իսպանիայում գանվում է 600-ից մինչև 700 ժամանակակից ուսաբերկրյա ինքնաթիռ և մոտավորապես զենքի բոլոր տեսակների 75 հազ. զինվոր։ Հարկավոր չե՞ արդյոք նախորդը նախապատրաստել Մենորկա կղզու և Ալբիանտե ու կարթագեն նավահանգիստների սկիուպացիան Փրանսական ուժերի կողմից, նախապես համաձայնեցնելով այս հարցը Բարսելոնի կառավարության հետ և, յեթե հասրավոր և, նաև Բուլղարուի կառավարության հետ։ Այս միջոցառումը ձեզ համար կապահովեր կապը Ոբանժի ու Ալժիրի հետ (այսինքն՝ Ֆրանսիայի աֆրիկական գաղութների հետ), մինչև վոր խալացիներն ու գերմանացիները բարեհաճեն թողնել իսպանիան։ Այս միջոցառումը կունենար նաև այն լրացուցիչ առավելությունը, վոր նա կղմիւրացներ քաղաքացիական բնակչությանը ոմբակոծելը։ Սակայն խոսք կարող ե լինել միմիայն Փրանկո-անդիական միատեղ ոկիուպացիայի մասին։ Մեր զաշնակցի (Անդիայի) կարևորագույն շահերը թելագրում են, վոր մեզ համար անհրաժեշտ և ապահովել 125-հազարանոց բանակի փոխադրության հնարագորությունը, վորը ներկայումս գտնվում է մեր Հյուսիսային Աֆրիկայում, ինչպես նաև Միջերկրական ծովի միջին-արևելյան մասի հետ մեր ունենալիք կապի ապահովությունը։ Մեր դաշ-

հակցի համար, ինչպես նաև մեղ համար, հասել ե «Հռոմ—Բեռլին առանցքի» կողմից կատարվող շրջապատման մանյովը բներին հանգիստ, սակայն կանխատես, արի և իրական քաղաքականությամբ պատասխանելու մոմենտը»:

Այսպիսին են Փրանսական դեներալի դատողությունները: Մենք կանգ չենք առնում նրա առաջարկների եյտթյան վրա—դա առանձին և տվյալ դեպքում վճռողական նշանակություն չունեցող հարց ե: Կարևոր է, վոր Փրանսական ռազմական շրջանները հասկանում են (և ի՞նչպես չհասկանան), վոր ստեղծված դրությունը պահանջում է վճռական ու պրակտիկ միջոցառումներ Ֆրանսիայի ամենաանմիջական շահերի պահպանության համար:

Սակայն յեթե գեներալ Արմանդոյի դատողություններում կա առողջ միտք, ապա միենույն ժամանակ նրանց մեջ իր արտացուրումն և գտել Փրանսական քաղաքականության նաև թուլությունը: Գեներալը պնդում է այն բանի վրա, վոր իսպանիայում կատարվող խոալո-դերմանական ինտերվենցիայի դեմ ձեռնարկելիքը յուրաքանչյուր միջոցառում պետք է պարտադրաբար անցկացվի Անգլիայի հետ միասնեղ: Սակայն, ինչպես հայտնի յե, անգլիական կառավարությունը ամենեին ել մտադիր չե պաշտպանել իր դաշնակցին ընդդեմ նրա թշնամիների:

Յեվրոպայում ստեղծված միջազգային բարդ իրադրության մեջ նոր ուժով է զրակորակում հանրապետական հերոսական իսպանիայի՝ Փաշիզմի դեմ մարտնչողի, հանուն խաղաղության, հանուն ամբողջ պրոդրեսիվ մարդկության գործի մարտնչողի դերը:

Խոռվարարներն ու ինտերվենտները չընկնեցին հանրապետակաների արիությունը, պայքարելու նրանց կամքը և հաղթանակի հավատը: Հանրապետության պաշտպանունակությունը որորի վրա ուժեղանում է չնորհիվ հանրապետական կառավարության ու բանակի վերակազմությանը:

Ֆաշիստներին հաջողվում է առաջ շարժվել կատաղի մարտերի և խոչըրագույն կորուստների հետեանքով միայն: Այն վայրերի բնակչությունը, ուր վոտք են կոխում ինտերվենտները, դեմոնստրատիվ կերպով հեռանում են դեպի հանրապետական տերիտորիա:

Դեպի Փաշիստները տածած ատելության մասին և կոխվուարունակելու անշեղ ձգտման մասին խոսում է հետեյալ վաս-

տը. Հանրապետական 5640 մարտիի արեւելյան Փրոնտում տեղի ունեցած մարտերի ընթացքում կտրվեցին մնացած բանակից և քաջվեցին Ֆրանսիա։ Ֆրանսական իշխանությունների կողմից կատարված հարցման ժամանակ 5460 մարդ ցանկություն հայունցին վերադառնալ Հանրապետական բանակը՝ կոխվը շարունակելու համար։

Հանրապետության ամբողջ բնակչությունը ձղտում է դնալ Փրոնտ, վորագեսդի կովի առելի թշնամու դեմ։ Դժվարություններ են առաջանում այս կամավորներին սպառապինելու վերաբերմամբ միայն։

Հանրապետական կառավարությունը անդլիական ու Փրանսական կառավարություններից վճռականորեն պահանջեց վերջ տալ չմիջամտելու կոմեղիային և Հանրապետական որինական կառավարությանը հնարավորություն ընձեռել գնելու անհրաժեշտ գենքը։ Ժողովրդական ամենալայն մասսաներն Անդլիայում ու Ֆրանսիայում վճռականորեն պաշտպանում են Հանրապետական իսպանիայի այս արդարացի պահանջը։ Ամենամոտ ապագան ցույց կտա, թե այս յերկրների հասարակական կարծիքին կհաջողվի՞ արդյոք ազգել Անդլիայի ու Ֆրանսիայի ղեկավարչը անհների վրա։

Համենայն դեպս, չնայած բոլոր դժվարություններին, Հանրապետական իսպանիան շարունակում է կովել, վորագեսդի հաղթի՛։

## Ա.Վ.ՍՏՐԻՍ.ՅԻ ԲՈՆԱԳԻՐԱՎՈՒՄԸ

ՅԵթե ՅԵլլրոպայի հարավ-արեւմուտքում անդլիական կառավարության քաղաքականությունը հասցըց Պաշտամական ինտերվենցիայի ուժեղացմանը, ապա կենարոնական ՅԵլլրոպայում նրա անմիջական հետեանքը հանդիսացավ ցինիկ ազրեսիայի նոր ակտը—Ավստրիայի բռնադրավումը գերմանական Փաշիզմի կողմից։

Փոփոխություն առաջ բերելով գերմանական բանակի ղեկավարության մեջ և նրա գլուխ կարգելով առավել ազրեսիվորեն տրամադրված գեներալների, Հիալերը փետրվարի 12-ին ավտորիական կանցկեր Շուշնիգին հրավիրեց իր ուղղելունցիան՝ Բերխտեսդադեն։ ՅԵրր Շուշնիգը այս տեսակցությունից հետո վերադրաժամ վիճննա, յեվրոպական շատ լրադրերում հազորդագրություններ յերեւան յեկան այն մասին, թե ավստրիական կանց-

ՀԵՐԸ Ավատրիայի նկատմամբ արված հիտլերյան վոտնձդություններին հակահարված և տվել: Սա ակնհայտնի սուտ մի խնֆորմացիա յեր, վոր շրջանառության մեջ եր գրվել առաջին հերթին լոնգոնից: Գերմանական Փաշիզմի բրիտանական գործակիցները դիտակցութեն մոլորեցնում եյին հասարակական կարծիքը, լուրեր տարածելով, թե Շուշնիդի վրա Հիտլերի կողմից գործ դրած ճնշումը իրը թե ձախողման հանդիպեց: Այդ «սուտը» նրա համար բաց թողին, վորպեսզի հանգստացնեն խաղաղության ու աղքերի անկախության հուզված կողմնակիցներին, ազըսուրին հնարավորություն տան ժամանակ շահելու: Այժմ, հասկանալի յե, վոչ մի կասկած չկա այն բանում, վոր Բերլիստեսդադենում տեղի ունեցած տեսակցությունը կանխորոշեց Ավստրիայի ուղղմական ոկլուսպացիան: Արդեն իսկ Բերլիստեսդադենում տեղի ունեցած տեսակցության ժամանակ Շուշնիդը, վորը ներկայումս գտնվում է կալանքի տակ, գերմանական կառավարության ժամանակավոր գերին եր:

Փարիզում հրատարակվող գերմանական «Փարիզեր ցայտունք» թերթը հրապարակեց ավստրիական Փաշիստներից մեկի միանդամայն ճշմարտանման պատմվածքն այն մասին, թե ինչպես ե տեղի ունեցել Շուշնիդի տեսակցությունը Հիտլերի հետ:

Ցեր Շուշնիդը իր շքախմբի հետ միասին ավտոմոբիլով հասավ գերմանական տերիտորիան, սահմանում նրան դիմավորեց Հիտլերի ազյուտանտներից մեկը, վոր գործուղված եր նրա մոտ, և վորը գուրս յեկավ Դոլֆուսի սպանությանը մասնակից ավտորիական մի Փաշիստ: Այս մանրատանությունը պարզուն բնութագրում ե այն մթնոլորտը, վորի մեջ ընթանում եյին բանակցությունները: Առաջին իսկ մօմենտից Շուշնիդին հասկանալ որվեց, վոր նրան կարող է վիճակիվել իր նախորդի վողբերդական ճակատագիրը, յեթե նա հակառակի գերմանական շանտաժին:

Նրա պատմին տրված բանկետը իրականում վախեցնելու մի միջոց եր: Միակ հյուրերը, ըստ յերեսութին, սպաներ եյին, վորոնք չքողարկված ձեռվ հասկացրին Շուշնիդին, վոր իրենք յեկել են մանուլիների, սակայն կարող են անհապաղ ներխուժել Ավստրիա: Ամեն կողմից Շուշնիդին շշապատում եյին զորքեր լիակատար սպառազինությամբ: Աակայն սա ամեննեին: Ել պատմո պահակ չեր: Հիտլերը գրեց իր պայմանները: Ցերը Շուշնիդը փորձեց հենվել իր կառավարության հետ խորհրդակեցելու անհրաժեշտության վրա, Հիտլերը ցինիկորեն նրան պա-

տասխանեց, վոր այս անդամ նա չի կարող հռւյս դնել արտասահմանի ոգնության վրա: Յել, իրոք, իր հարցումների համար Շուշնիդը խուսափողական պատասխան ստացավ Անդրիայից ու Ֆրաննիայից:

Վերադառնալով Վիեննա, Շուշնիդն անպայման արդեն դիտեր, թե ինչպիսի հետազա ընթացք կունենան դեպքերը: Նա, ի միջի այլոց, այդ բանը պարտավոր եր իմանալ ե'լ ավելի առաջ, վորովհետեւ, ըստ յեվրոպական մամուլի միքանի հաղորդումների, դեռևս 1938 թ. հունվարին վիեննական կառավարությանը նախազգուշացված եր, վոր Հիտլերը վերցնում ե Ավստրիան ուղղակի բռնադրավելու կուրօ:

Վորավես նշանակալից պատմական մանրամասնություն, վորը բնորոշում է Գերմանիայի կողմից Ավստրիան բռնադրավելու իրադրությունը, հանդիսանում է այն փասուը, վոր այն մոմենտին, յերբ զերմանական զորքերն անցնում եյին ավստրիական սահմանը, Փաշխտական Գերմանիայի արտաքին զործերի մինիստր Ռիբենտրոպը գտնվում եր անդլիական պրեմյերի մոտ վորավես հյուր: Յերկուսն ել, անտարակույս, գիտեյին, թե ինչ է կատարվում Ավստրիայում:

Յեվրոպական քաղաքականության լոնդոնյան դիրիժորները փորձում եյին թուլացնել այս փաստի նշանակությունը, սակայն նույնիսկ նրանց բացատրությունները վերին աստիճանի ցուցանշական են: Յեվրոպական մամուլում մի հաղորդագրություն հրապարակվեց, վորի համաձայն անդլիական մինիստրի հետ Ռիբենտրոպի ունեցած տեսակցության ժամանակ անդլիական մինիստրը վորավես թե անհանդստություն է արտահայտել Ավստրիայի վրա կախված սպառնալիքի առթիվ: Սակայն Ռիբենտրոպն իրը թե հանգստացրել է իր անդլիական բարեկամներին: Նա վոչ միայն նրանց հավաստիացրել ե, վոր յերկուդը հիմնավորված չե, այլև նրանց առաջարկել է միանալ Շեռլինի հետ հեռախոսով՝ համոզվելու համար, վոր զերմանական կառավարության մտադրությունները մաքուր ու անմեղ են:

Արտաքին դործերի անդլիական մինիստրը ավելորդ համարեց ստուգել Ռիբենտրոպի խոսքերը և շտապեց հավատացնել ավստրիական կանցլերին, վոր նա կարող է յերկուդ չկրել զերմանական զորքերի ներխուժման առթիվ: Դավաճանական այս խորհուրդը լորդ Գալբֆաքսը տվեց յերեկվա ժամը 4-ին, իսկ յերեկոյան ժամը 9-ին Լոնդոնում հայտնի գարձավ, վոր զերմա-

նական զորքերն արդեն զտնվում են Ավստրիայի տերիտորիայում:

Այս հաղորդագրությունները նպաստակ ունեյին արդարացնելու Զեմբեռլենի ու Գալիֆաքսի վարչադիմք, թեև դժվար չեն հասկանալ, վոր այդ հաղորդագրություններն ինքնին բավարար հանցանշան են ծառայում, վոր հաստատում ե անդլիական միակատրների ու ֆաշիստական զավթողների ընկերակցությունը: Մանավանդ վոր Զեմբեռլենն ու Գալիֆաքսը կարիք ել չունեմին Ռիբբենարտպի կողմից արվող հանդստացուցիչ հավաստիացումների կամ նդիային, քանի վոր նախորոք ամեն բանի տեղյակ էյին և Գերմանիայի կողմից Ավստրիան բռնադրավելու պլանը որհնել եյին:

Այն յերեք ուլտախատումները, վոր Հիտլերը հաջորդաբար ներկայացրել եր ավստրիական կառավարությանը, ամենամաքուր անսակի պրովինցիա եյին: Զուր չեր, վոր մեկ պահճանմը բավարաբերուն անմիջապես հետևում եր մյուսը: Վիեննայում հեշտությամբ պիտի հասկանային այս ուլտիմատումների իսկական բնույթը: Զե՞ վոր 1914 թվականի համաշխարհային պատերազմին սկսվեց այն բանից հետո, յեր վոր արտաքին զործերի ավտորո-հունգարական մինիստր գրաֆ Բերիստոլդը Սերբիային ուղարկմատում ներկայացրեց, նախապես իմանալով, վոր այն անհնար և բավարաբել:

Չնայելով ավտորիական կառավարության հնագանությանը, Հիտլերն շտամպեց գերմանական զորքեր ուղարկել Ավստրիա, վերովհետև նա վախենում եր առաջիկա ժողովրդական քվեարկությունից: Ավստրիայի յուրաքանչյուր բնակչի համար պարզ եր, վոր Հիտլերի ազենտներն իրենց սեփական ուժերով ի վիճակի չեն իշխանություն նվաճել կամ թեկուղ լուրջ յելույթ կազմակերպել ընդդեմ յերկիր անկախության: Գերմանիայի կողմից Ավստրիան ոկուլարացիայի յենթարկելուն նախորդած որերին ժողովրդական ամենալայն մասսաների մեջ տիրող տրամադրությունների մասին վկայում են թեկուղ հենց հետեւյալ փաստերը. ավստրիական բանվորները 48 ժամվա ընթացքում հավաքեցին ավելի քան 1 միլիոն ստորագրություն հոգուտ Ավստրիայի անկախության ու ազատության: Գյուղացիական կազմակերպությունները համերաշխորեն արտահայտվեցին հոգուտ միենույն լոգունգների: Տրամադրությունը յերկրում այնպիսին եր, վոր 1938 թ. մարտի 13-ի համար նշանակված «հանրաքվեն», անկառ

կած, ցույց կտար, վոր ավստրիական ժողովրդի 80%-ից վոչ-պակաս մասը տրամադրված ե ընդդեմ Յերորդ կայսրությանը միանալուն:

Ինչպիսի կեղծ փաստարկումների ու գեմափոքիական պրիումների ել վոր դիմելու լինեն գերմանական ֆաշիստները, նրանք չեն կարող ժխտել այս փաստը: Յեթե նրանք հույս գնելու լինելին այն բանի վրա, վոր ավստրիական բնակչությունը կը լեռարկի հոգուտ Գերմանիային միանալուն, ապա Բեռլինը չեր շտամպի զորքեր ուղարկել Ավստրիա:

Զե՞ վոր ավստրիական կառավարության կազմի մեջ վորպես ներքին գործերի մինիստր մտնում եր Զեյս Ինկվարտը—Հիտլերի ուղղակի աղենտը: Ավստրիական հիտլերականների կազմակերպությունը փաստորեն լեզարցված եր և նրանց աղիտացիան՝ թույլատրված: Հետեւապես, գերմանական ֆաշիստներն իրենց ձեռքին ունեյին ամենաիրական միջոցներ, վորպեսզի կարողանային իրենց կողմը գրավել «Հանրաքվեյին» մասնակցողների ձայները: Այսուամենայնիվ, այդ քվեարկությունը կանխելու համար Գերմանիան ամենակողիտ, ամենաանպատճառ կերպով խախտեց ավստրիական սահմանների անձեռնմխելիությունը և ֆաշիստական կոչկի տակ ջախջախեց Ավստրիայի անկախությունը: Ի՞նչ արժեք ունի սրանից հետո ուայխստագի ընտրությունների ու «Հանրաքվեյի» կոմեդիան, վոր գերմանական ֆաշիզմը ապրիլի 10-ին կազմակերպեց գրավված Ավստրիայում:

Վոր գերմանական ֆաշիստներն Ավստրիան դիտում ենին վորպես մի յերկիր, վորը պետք եր գրավել, այդ մասին և խոսում թեկուզ հենց այն փաստը, վոր Ավստրիայի տերիտորիան Ելին փոխադրված շատ նշանակալից ուղմական ուժեր: 250 հազար մարդուց բաղկացած գերմանական մի բանակ՝ մարտական լիակատար պատրաստությամբ, առնվազն 50 հազար մարդուց կազմված դարչնադույն լանդաներով ուժեղացված, գրավեց Ավստրիան, վոր ուներ 61/2 միլիոն բնակչություն: Միմիայն վեհնաւ մտավ մոտորացված մեկ դիվիզիա: Ռազմական աերոդրումներ առաջին իսկ որերին ցած իջան ալելի քան հարյուր հատ ծանր ոմբակիրներ: Ոկուսպացիոն զորքը 8 անգամից ավելի յեր գերազանցում Ավստրիայի իրեն զինված ուժերից և կազմում և Գերմանիայի մինչպատերազմյան ամբողջ բանակի մոտավորապես 50%-ը:

Ավստրիայի ոկուսպացիայից հետո յերկում ծալալիեց Փա-

Հիսոտական հրեշտային տեռոր։ Սկսվեցին չուրջկալները—խուզարկության եյին յենթարկվում թաղ թաղի հետեւից, տուն տան հետեւից, բնակարան բնակարանի հետեւից։ Սկսվեց մասսայական փախուստ Վիեննայից ու գալաներից։ Փախուստն այնպիսի լայն չափեր ընդունեց, վոր յելքոպական մի շարք յերկրներում և նույնիսկ ԱՄՆ-ում անց են կացվում հասառել միջոցառումներ ավտորիական փախստականներին ոգնություն ցույց տալու համար։

Միաժամանակ Վիեննայով անցալ ինքնասպանությունների ալիքը։ Մարդկանքի կյանքի հետ հաշիվները վերջացնում եյին ընտանիքների ու հարազատների հետ մեկտեղ։ Շատ ինքնասպանություններ, վորոնց մասին հաղորդվում եր Փաշխստական մամուլում, իրականում ուղղակի դուրս եյին գալիս հետևերիզացիայի հակառակորդների սպանություններ։

Այս իրադրության մեջ գերմանական Փաշիզմը «Ժողովրդական քվեարկություն» եր բեմադրում։ «Ժողովրդական քվեարկության» անցկացման Բեռլինի լիազոր Բյուրկելը միանգամից բացեց խաղաթթերը, յերբ իր կոչի մեջ հայտարարեց, թե այն հարցը, վոր զբարում ե Ավստրիայի գերմանական բնակչության քվեարկությանը, ըստ եյության ձեակերպվում ե հետեւյալ կերպ։ «Գերմանացի՞ յես դու արդյոք»։

Դեռևս մինչև ապրիլի 10-ի «քվեարկությունը» Ավստրիան հայտարարվեց Գերմանիայի մի մասը, ավստրիական բանակը մտցվեց գերմանականի կազմի մեջ, ավստրիական բանեկի վոսկու պաշարները դուրս տարվեցին Բեռլին։ Ավստրիայում թողնված չե ինքնավարության նույնիսկ յերեւութականությունը։ Այն յերկիրը, վոր յերբեք մտած չի յեղել Գերմանիայի կազմի մեջ, պարզապես փոխարկված ե գերմանական պրովինցիայի՝ առանց իրավունքների, առանց Փինանսական միջոցների—Փաշխստական պետության մնացած մասերի հետ հավասար հիմունքներով։

Սրանից հետո տեղի ունեցավ այսպես կոչված «Հանրաքվեն», վորը պետք ե ցույց տար, թե Ավստրիան «կամովին» միացել ե Գերմանիային։ Ֆաշխստական տեսորի, զեմագողիայի ու սրիկայտության ապարատը տվեց հիտլերականներին պիտանի հետեւանքները։ Ավստրիայի բոնագրավումը սրբագործվեց գետապյի ջանքերով։ Բնորոշ ե, վոր նույնիսկ ոտարերկրյա բուրժուական մամուլը լուրջ հետաքրքրություն չցուցարերեց

դեսլի գերմանական «Հանրաքվեյի» աշխատման հարցը: Բեռլինում նախապես հեղինակված թվերը վոչ վոք չի գիտում վորպես Յերրորդ կայսրության, իսկ առավել ևս հենց նոր բըռնադրաված Ավստրիայի բնակիչների տրամադրությունների խակական ցուցանիշ: «Վոչ վոք չի հաշտառա, — զըռում եր Փրանսական լրագրի «Պարի Փարէլուէնը», — վոր 100 ալստրիացուց միմիայն մեկը բացասական քվե տված լինի»:

Ավելի մեծ ուշագրության, քան թե քվեարկության վոչինչ շասող կեղծված թվերը, արժանի յեն այն ճառերը, վոր նախագան ձայնովությունն արտասանում եյին Փաշիստական զանագան պարագլուխներ: Ռայխստագում փետրվարի 21-ին Հիտլերի արտասանած ճառն արդեն, վորին մենք կանցնենք քիչ հետո, ցույց տվեց, վոր գերմանական ֆաշիզմը, վայր դնելով բոլոր գեմագողիական դիմակիները, հանգես և գալիս բացահայտ իմպերիալիստական լողունդներով ամենացիկ ձեռով: Հենց այս բնորոշ դիմն ունեյին նաև այն ճառերը, վոր արտասանվում եյին «Հանրաքվեյի» նախորյակին, 1938 թ. ապրիլի 10-ին: Գերրելսը պարծենում եր նրանով, վոր պրուսական կոչիկը յերեաց վեհնայի փողոցներում, և չգերազանցված լկտիությամբ «Հանրաքվեյի» բեմագրությունն անվանում եր «Յելիրապայի յերեսին հասցված հարված»:

Գերմանական Փաշիստները «Հանրաքվեյն» միանդամայն ակնհայտնի կերպով դիմում են վորպես նոր արտաքին-քաղաքական ավանդությաների համար յելակետային մոմենտ, մանավանդ վոր Ավստրիայի բախտի հարցը վորոշված եր բռնի ճանապարհով, «Հանրաքվեյից» անկախ:

Հիտլերը ցանկանում ե կարծ ժամկետում Ավստրիան փոխարկել հուսալի թիկունքի, վորպեսզի սկսի ռազմական նոր ավանդությաներ: Սակայն այս բանը նրան չժիշվար թե հաջողվի: Ավստրիայի կոմկուսակցությունը ամբողջ ժողովրդի կարծիքն ե արտահայտում, յերբ ասում ե. «Թո՞ղ գերմանական Փաշիստներն իմանան: Թո՞ղ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը լսի: Ավստրիական ժողովուրդը յերբեք չի ճանաչի այդ ոտարերկրյա տէրապետությունը, վորը հենալում ե ալինի ու տանկի վրա»: Ոտարերկրյա վարձկանների կողմից կատարվող ճնշումը կհամախմբի ավստրիական ամբողջ ժողովրդին: Յեկ յեթե այսոր, չնոր հիվ անդիմական կոնսերվատորների դավաճանական դերի, Հիտլերի կողմից Ավստրիայի վրա հարձակվելու համար իրադրու-

թյունը բարեհաջող հանդիսացավ, ապա արդեն վազը միջազգային պլատիտարիատը, դեմոկրատիայի ու պրոլետարիատի բոլոր ուժերը կարող կլինեն ողնել ավտորիական ժողովրդի ազատադրական պայքարին: «Շնորհիվ սեփական ուժերի և խաղաղության միջազգային ֆրոնտի ողնության նորից վողի կառնի աղատ, անկախ Ավտորիական կոմիուսակցության կոչեց:

## ՄԵԴԱԼԻ ՀԱԿՍՈՒԱԿ ՅԵՐԵՍԸ

Իսկ ինչո՞վ բացատրել, վոր Անդրիայի կառավարությունը և վորոշ չափով ել ֆրանսական կառավարությունը վարում են յերկու պետությունների շահերին ել այդչափ հակասող կապիտուլանտական քաղաքականություն՝ Փաշիստական ադրեսորների նկատմամբ:

Զե՞ վոր շարունակում են գոյություն ունենալ անդլո-դերմանական հակասությունները, ինչպես նաև՝ անդլո-իտալականները: Ինչո՞վ բացատրել, վոր չնայելով դրան, բրիտանական կառավարությունը տանում է աջակցության և նույնիսկ համաձայնության քաղաքականություն ագրեսորների նկատմամբ:

Գործի այս կողմի լուսաբանության համար անհնաժեշտ են հիշեցնել Հիտլերի վետրվարի 20-ի ճառը, վորը նախորդեց աղքակայի վերջին ակտերին:

Հիտլերին չհաջողվեց ճառ արտասանել Փաշիստական ռեժիսի հնդամյակի առթիվ: Նա չկարողացավ ուայիստագը գումարել նշված որը՝ 1938 թ. հունվարի 20-ին, վորովհետև ստիլ-ված եր լուծել այն վեճը, վոր վեր եր ածվել բացահայտ պայքարի ռայիսավերի զեկալարների և Փաշիստական կուսակցության վերնախավի միջև: Յերեք շաբաթից հետո միայն Հիտլերը հնարավորություններ՝ ստացավ հրապարակել իր դեկլարացիան: Այդ գեկարացիան բովանդակում եր մի շաբաթ անկեղծ ագրեսիվ արտահայտություններ՝ արտաքին քաղաքականության հարցերի վերաբերմամբ:

Մինչդեռ Փաշիստաները դեմագոգիական նպատակներով յերբեմն փորձում եյին թագյնել իրենց ավազակային պլանները:

Սակայն Հիտլերի վետրվարի 20-ին արտասանած ճառում բոլոր դեմագոգիական չխկչխկանները, «խաղաղասիրական» կեղծ հավաստիացումները բացակայում եյին: Նույնիսկ խոսելով Հեռավոր Արևելքում մղվող պատերազմի մասին, վորը անմիջական

առնչություն չունի Գերմանիայի հետ, Հիտլերը հանդես յեկավ վորպես անկեղծ խմբերիալիստ: Նա պահանջում էր Զինառատանի ստրկացումը և պնդում էր այն բանի վրա, վորպեսզի հապոնական սագմականությանը գործողությունների լիալատար աղատություն վերապահվի Զինական հանրապետության վերաբերմամբ: Հիտլերն արտահայտվեց հոգուտ խմբերիալիստական դիշատիչների միջև Զինառատանը բաժանելուն: Ինքնին հասկանալի յեւ, Հիտլերն եւ ավելի աղբեսիվ էր տրամադրված, յերբ գործը վերաբերում էր այն յերկրներին, վորոնց բռնագրավման մեջ Գերմանիան անմիջականորեն շահագրգռված էր: Անդուսպ աղբեսիան և բնորոշում Փաշխտական Գերմանիայի բոլոր արտաքին-քաղաքական միջոցառումները:

Սակայն սրանից ամենին ել չի հետևում, վոր զավթողական պլանները հանդիսանում են վորպես Փաշխտական Գերմանիայի ուժի արտացոլում: Այս բանը պետք է հաշվի առնել, անալիզի յենթարկելով Փաշխտական աղբեսորների ու նրանց աջակիցների քաղաքականությունը:

Հիտլերը հանդես յեկավ վոչ միայն զավթողական լողունողներով: Նա քիչ ուշադրություն չնվիրեց նաև ներքին-քաղաքական հարցերին: Իր ճառի այս մասում Հիտլերը մեջ բերեց մի շարք թվեր, վորոնք պիտի վկայեցին այն մասին, վոր Գերմանիայում աճում և սագմական արդյունաբերությունը: Դրոք, սազմական արդյունաբերությունն և Գերմանիայում աշխատում լրիվ թափով: Սակայն այս հանրահայտ փաստով չի սպառվում ամրողությամբ վերցրած գերմանական եկոնոմիկայի դրության չարցը:

Յուցանշական եւ, վոր, թվարկելով թվերի անվերջ շարքեր, ընդհաւապ մինչև ավտոբումներով փոխադրված ուղեկորների թիվը, և յուրաքանչյուր տարի Գերմանիա ուղարկվող նամակների թիվը,—Հիտլերը վոչ մի թիվ չբերեց սպառման միջոցների արտադրության մասին, աշխատավարձի Փոնդի և Գերմանիայի պարենային բալանսի մասին:

Յեթե Հիտլերը սիրու աներ հրապարակել տվյալներ սպառման միջոցների արտադրության մասին, ապա նա ստիպված կլիներ հայտնել, վոր այդ արտադրությունը գտնովում է 1929 ճրգնաժամային թվականի մակարդակի վրա: Բասփորում արտադրանքի մեծ մասը դնում է բանակը հայթայթելուն, մինչդեռ բնակչությունն այդ տարիների ընթացքում աճել է: Միան-

դամայն ակնհայտ է, վոր Փաշիստական տիրապետության ժամանակի ընթացքում ազգաբնակությունն սպառման լայն առարկաներով ավելի վատ և մատակարարվում, քան առաջ:

Յեթե Հիտլերը մտադրվեր թվեր բերել Գերմանիայի գյուղատնտեսության զրության մասին, ապա նա պետք է խոստովաներ, վոր 1937 թվականին ցանքի տարածությունը 1932 թվականի համեմատությամբ կրճատվել և մոտավորապես մեկ միլիոն ձեկտարով վոչ միայն ի հաշիվ հողերը զինվորական վարչությանը հանձնելու (մասնավորապես աերոդրոմներ, սահմանամերձ ամրություններ, ավտո-արագաներ կառուցելու համար), այլև մանր ու միջակ գյուղացիության քայլայիման հետեանքով:

Հիտլերն ստիպված կլիներ հայտնել յերկրի բնակչությանը, վոր Փաշիստական գիլտատուրայի ժամանակի ընթացքում բերքավությունը նշանակելիորեն ընկել է, վոր նշանակելիորեն պակսել և խողերի ընդհանուր թիվը և վոր անասունների համաձարակն ընկանալ և հրեշավոր չափեր՝ գերմանական գյուղատնտեսության գեղագացիայի հետեանքով: Յեթե մենք 1932 թ. բերքը համեմատելու լինենք 1937 թ. բերքի հետ, ապա կտևանենք, վոր հատիկալոր կուլտուրաների բերքը քչացել և գրեթե 3 միլիոն տոննով:

Հիտլերը վերին աստիճանի հասկանալի պատճառով վոչ մի խոսք չասաց աշխատավարձի մասին: Ինչ թիվ ել վոր նա բերքելու լիներ, նա չեր կարողանալու գերմանական բանվորներին ժողովանալ տալ, վոր նրանց ստացած նոմինալ աշխատավարձն իջեցված է, վոր նրանց բանվորական որն ավելի յերկարատե և ու ավելի ինտենսիվ, իսկ բանվոր դասակարգի ուսալ յեկամուտն ամրողությամբ վերցրած չի գերազանցում 1933 թվականի, այսինքն ամենախորը ճգնաժամի թվականի յեկամուտին:

Հիտլերի այս մեջ չըերած թվերի մեջ ել հենց պարունակվում և Հիտլերի ավանդուրիստական արտաքին քաղաքականության և Փաշիստական ադրեսորների առջև անդիմական կոնսերվատորների կազմիտուղացիայի բացարությունը:

Կասկածի յենթակա չե, վոր գերմանական Փաշիզմի արտաքին-քաղաքական ավանդուրաների մեջալի հակառակ յերեսը դա գերմանական Փաշիզմի ներքին-քաղաքական տնտեսական ծրագրի սնանկությունն է, վորն սպառնում և սոցիալական խոչը կոնֆլիկտներով: Զուր չեր, վոր Ավստրիան բանագագելուց անմիջապես հետո Հիտլերն իսկոյն եթ գերմանական ժողո-

վըրդից նորից պահանջեց տրամադրել իրեն չորս տարի գերմանական տնտեսությունը կարդի բերելու համար։ Նման պահանջով նա հանդես յեկավ սրանից հինգ տարի առաջ, յերբ անցավ իշխանության դրուի։ Այժմ Փաշխտական դիլտատորը պահանջում է նոր տարկետում։

Փաշխտական Գերմանիայի տնտեսության այն ճյուղերը, վորոնք անմիջականորեն կապված են ռատմական արդյունաբերության ու պատերազմի նախազարարական հետ, իրոք աշխատում են լիակատար բեռնվածությամբ, սակայն ամբողջությամբ վերցրած գերմանական եկոնոմիկան դանում ե փակուղու մեջ։

Փաշխոմի տնտեսական քաղաքականության վիլուգումը սկսում է արտահայտվել նաև այն բնադավառներում, վորոնք մինչեւ այժմ հանդիսանում ենին վորպես սպառադիման քաղաքականության անցկացման հիմնական աղբյուրներ։ Արդեն իսկ 1938 թ. մարտին ույախսրանկի նախադահ Շախտը մի ճառ արտասանեց, վորի մեջ ասաց, թե գերմանական սպառադիմումների ֆինանսավորման հիմնական աղբյուրներից մեկը՝ կարճաժամկետ վարկերն սպառված են։ Նա մատնանշեց, լոր «կարճաժամկետ վարկերի զարգացումն այսուհետեւ չպետք ե զերազանցի այն շրջանակներին, վորոնք Փիլքսացիայի յեն յենթարկված արտադրանքի չափերով»։ Շախտի մյուս արտահայտություններից պարզ կերպով յերեսում ե, վոր գերմանական խոշոր արդյունաբերական շրջանները յերկուուրեն կրում, վոր չենի թե բանը հասնի մինչեւ բացահայտինքլացիան։

Ավելի մեծ դժվարություններ են ծաղում նաև մի այլ աեղամասում, վորը կապված ե սպառադիմումների հարցերի հետ, գերմանական արտաքին առեւտրի բնադավառում։ Արդեն իսկ 1938 թ. հունվարին Գերմանիան պասսիվ բարանս ուներ։ Փետրվարին առեւտրական բարանսի պասսիվը մեծացավ։ Նախնական հանրապումարներ տալով, կարելի յեւ հալաստել, վոր դերմանական եքսպորտը՝ սկսած 1937 թ. հոկտեմբերից սիստեմատիկորեն ընկնում է։ Այլ խոսքով, Գերմանիային սպառնում ե սպառադիմումները Փինանսավորելու ինչպես ներքին, նույնպես և արտաքին աղբյուրների սոլառում։

Գերմանական Փաշխոմի ներքին-քաղաքական ու տնտեսական վիլուգման ցուցանիշներից մեկն և հանդիսանում Շախտի հեռանալը Գերմանիայի ժողովրդական տնտեսության մինիստրի պոստից։ Շախտի հիմնական գիծը, բացի պետական պարտքերը վճարելուց խուսափելու արվեստից, հանդիսանում ե ընկղմվող

շողենավը ժամանակին թողնելու ընդունակությունը։ Դեռևս  
վայրարյան հանրապետության ժամանակ Շախտը դրսելորեց իր  
ձիբքերը, դուրս դարով դեմոկրատական կուսակցությունից այն  
մոմենտին, յերբ կուսակցությունը դեռևս բավականաչափ ուժեղ  
ֆրակցիա ուներ ռայխստագում։ Շախտն իր հաշվիների մեջ  
չսխալվեց, դեմոկրատական կուսակցությունն ե'լ ավելի առաջ  
քայլարյեց, քան Վայմարյան հանրապետությունը։

Հաշվի առնելով Շախտի անձնական առանձնահատկություն-  
ները, կարելի յե վոչ առանց հիմքի յենթագրել, վոր 1938 թ.  
Նախորյակին հիտլերյան կառավարության կազմից նրա հեռանա-  
լը հանդիսանում ե վորակս ցուցանիշ ֆաշիստական Գերմանիա-  
յում աճող անրարեկցության։

Ե'լ ավելի նշանակալից լուրջ ցուցանիշ ե հանդիսանում գեր-  
մանական բանակի հրամանատարության ճնշաժամը, վորն ար-  
տահայտվեց ռազմական մինիստրի—Փելդմարշալ Բլումբերգի  
հրաժարականով, դեներալիտետի մի շարք ականավոր ներկայա-  
ցուցիչների արձակմամբ ու կալանավորմամբ, սպայական կազ-  
մի դամամբ։

Այս բոլոր փաստերը մեզ թույլատրում են պատասխանել  
այն հարցին, թե ինչ պատճառներ են դրդում գերմանական ֆա-  
շիզմին դեպի նորանոր արտաքին-քաղաքական ավանտյուրաներ։  
Մասսաների աղքատացումը, դյուզատնտեսության քայլայտումը,  
թանկության հսկայական աճումը, համատնտեսական աշխուժաց-  
ման պլանների ձախողումը, սպառազինումները ֆինանսավորելու  
աղբյուրների աստիճանաբար սպառումը, —այս ամենը միասին  
վերցրած պայմանավորում ե ֆաշիստական Գերմանիայի հետ-  
զետե աճող ազրեսիլությունը։

Հենց նույն պատճառներն ել վորպես բացատրություն են ծա-  
ռայում ֆաշիստական իտալիայի արտաքին քաղաքականության  
ավանդայուրիստական կուրսի համար։ Իտալիայի Փինանսական ու-  
տնտեսական դիբքը, առանց բացառության բոլոր ոտարերկրյա-  
դիտողների վկայության համաձայն, գտնվում ե ծայր աստիճան  
կրիտիկական մակարդակի վրա։

Հարեւնուանյան ավանդյուրան իտալիային հսկայական զոհեր  
արժեցալ և վոչինչ չսպից նրան։ Հարեւնուանը վերջնականապես  
նվաճել չհաջողվեց։ Ապրանքների արտահանության պլաններից  
վոչինչ չստացվեց, վորովհետեւ մարդ չկա, վորին ծախես այդ  
ապրանքները, վոչինչ չստացվեց նաև «ավելորդ» մարդկանց  
զաղթեցնելու պլանից։ Վոչինչ չստացվեց հանածոների հանույթի

պլանից, վորովհետև այդ հանածոներին հասնել չտաղողիկէ : Չարդարացան նաև Իսպանիայում արալորեն հաղթանակ տանելու հաշխիմները, այն հաշխիմները, թե Իսպանիայի ինտերվենցիան կծածկի հարեցական ավանդուրայի վնասները :

Իտալիայի թուլացման ամենալավ ապացույցը հանդիսանում է այն փաստը, վոր Մուսոլինին պետք է համաձայներ Ավստրիայի բոնագրավմանը Գերմանիայի կողմից։ Դեռևս 1934 թվականին, յերբ գերմանական Փաշտաները Ավստրիայում խոսվություն սարքեցին, Մուսոլինին իր զորքերը շարժեց գերմանացներ, գեղի ավարութափական սահմանը։ Իսկ 1938 թվականին խորական սահմանավահարկն ստիպված եր ստորագրությամբ փողջունել գերմանական Հավատակիչներին։

Իստալիայի գերքը կենտրոնական Յևրոպայում ներկայումս բնորոշվում է, ըստ Մուսովինիի սեփական խռատվանության, հետեւյալ կերպ. «Յեթև հնարավորություն չկա հակադրելու վրահե զենքը, ալելի լավ է, վոր այդ զենքը տեղի ունենա առանց մեղ և վոչ մեր գեմ»:

Այս խոռքերը ծածկում են իտալիայի կողմէից հարավ-արև-վելյան Յելլոպայում իր զիրքը հանձնելը, եքսպանսիսյի նախ-կին պլաններից հրաժարվելը, վոր առաջ ե յեկել սեփական թուլաւթյան դիտակցությունից :

Ապրիլի սկզբին Մուսովինիկ արտասահնած ճառը Հանդիսացավ վորպես խտալական Փաշիզմի ներքին-քաղաքական ու տնտեսական սնանկության նոր ելյուստրացիա։ Մուսովինին լիակատար վորոշակիությամբ հայտարարեց, վոր խտալական Փաշիզմի ամբողջ ներքին ու տնտեսական քաղաքականության միակ բոլվանդակությունն ու միակ նողատակը Հանդիսանում է պատերազմ նախապատրաստելու։

ՅԵթե ուշադրությամբ գիտենք վերջերքս տեղի ունեցող անդ-  
լո-խոտալական բանակցությունները, ապա դժվար չի լինի նկա-  
տել, վոր Զեմբեռլենի հետ վարած բանակցությունների մեջ  
Մուսոլինիի հիմնական արգումենտը—դա ինքնասպանությամբ  
սպառնալին է: Մուսոլինին բրիտանական կոնսերվատորներին  
սպառնում եր, վոր յեթե նրանք Փաշխտական Իտալիայի հետ  
համաձայնության չգտն, ապա կամ ներքին-քաղաքական սնան-  
կացումը Փաշխտական ուեժմի փլուզում կառաջացնի, կամ թե  
Փաշխտական Իտալիան, վախենալով ներքին կատաստրոֆից,  
ունաճալույթ կանի արտաքին-քաղաքական կատաստրոֆը:

Դեռևս հարեցատանյան ավանտյուրիալի ժամանակ, այն մոմեն-

ուին, յերբ ընդգեմ իտալիայի հայտարարվեցին տնտեսական ու ֆինանսական սանկցիաներ, կարելի յեր նկատել նման արգումենտների ազդեցությունը բրիտանական կոնսերվատորների վրա:

Ներկայումս Փաշխտական իտալիայի ու Փաշխտական գերմանիայի ներքին-քաղաքական դժվարությունները ե'լ ավելի ուժգին են դրսելորվում: Բրիտանական կոնսերվատորներն ե'լ ավելի մեծ դիջումներ են անում Փաշխտական ագրեսորներին: Անդլիայի աջակցությունը Փաշխտական աճող ազրենիային՝ հակառակ Բրիտանական կայսրության շահերի, իր պետական շահերին դաշտաճանելը կատարվում է հանուն դասակարգային շահերի:

Փաշխտական ուժիմի խորտակումը իտալիայում ու Գերմանիայում կհասցներ այնպիսի փոփոխությունների Յելբուղայում, վորոնք հաճելի չելին լինի վո'չ և եղի Աստորի, վո'չ Նելի Զերբուլենի, վո'չ ել Կլայվելենում հալվագվող ամբողջ կլիկայի ճաշկին: Մուսոլինին ու Հիտլերը անողոք տեսորի, դաժան շահագործման, անդուսպ դեմազողիայի և կեղտոտ խարեյության ովնությամբ իրենց ժողովուրդներին ներդրավում են ռազմական կատաստրոֆի մեջ, միայն թե պահպանած լինեն ֆինանսական կապիտալի տիրապետությունը: Այդ խել նոպատակին հասնելու համար բրիտանական քաղաքականության ղեկավարները չմի-ջամտելու անհամոթ կոմեդիայի, Փաշխտական թալանին բացահամար կերպով աջակցելու և անդլիական ժողովրդին նուրբ կերպով խարելու միջոցով արագացնում են ռազմական կատաստրոֆի վրա հասնելը:

## Ա.Գ.ԲԵՍՈՐՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՊԼԱՆՆԵՐԸ

Վորոնք են յելբուղական ուսակցիոն բուրժուազիայի հանցավոր քաղաքականության հնարավոր հետևանքները: Կարելի՞ յել ընդունել, վոր Ավստրիայի գրավումը գերմանական Փաշիզի կողմից, իտալո-գերմանական ինտերվենցիան խոպանիայում ինքնին հանդիսանում են ինքնանապատակ: Վո'չ: Խոսքն ավելի մեծ քանի մասին ե: Այն դեսպօր, վորոնց վկաներն ենք մենք հանդիսանում, իրենցից ներկայացնում են աշխարհի վերաբաժանման համար իմպերիալիստական նոր պատերազմ սանձալուծելու ետապներից մեկը միայն:

Բոնագրավելով Ավստրիան, Գերմանիան իր աերիտորիան

մեծացրեց զբեթե 84 հազար քառակուսի կիլոմետրով և Գերմանիայի բնակչությանը միացրեց 6½ միլիոն ավատրիացի։ Միաժամանակ Գերմանիան յերկարացրեց իր սահմանը Չեխոսլովակիայի կողմից 500 կիլոմետրով և Շվեյցարիայի կողմից՝ 70 կիլոմետրով։ Գերմանիան ձեռք բերեց նոր հարեաններ։ Հարավ-արևելքում նա այժմ սահմանակից և Հունգարիայի հետ, հարավում՝ Հարավ-Արևիայի հետ։ Վերջապես, Գերմանիան նոր սահման ձեռք բերեց Խոալիայի կողմում։ Այլ խոսքով՝ Գերմանիան ընդհուպ մատեցավ Հարավ-արևելյան Յեվրոպայի այն յերկրներին, վարոնց վրա գերմանական խմբերի վիզով վաղուց արգեն ուղում եր գնել իր ձեռքը։

Ավստրիայի միացումը Գերմանիային վերջինիս ընձեռում և միքանի վերին ստամբանի սահմանափակ տնտեսական ողուտներ, սակայն այդ բանը կապված է տնտեսական նոր դժվարությունների հետ։ Գերմանական Փաշտղմբը յենթագրում է, թե ինքը կարող է լայնարձն չահագործել ավստրիական յերկաթահանքի ու քարածխի հանքաշերտերը, անտառային հարստությունները։ Սակայն Ավստրիան ավելի մեծ չափով, քան թե Գերմանիան ինքը, տառապում է պարենային ռեսուրսների պակասությամբ։ 1936 թվականին Ավստրիան ներմուծեց ժողովրդին կերակրելու համար անհրաժեշտ ցորենի 40%-ը, բայց դրանից, անհրաժեշտ է, վոր նա արտասահմանից ներմուծի պարենավորման նաև ուրիշ առարկաներ։ Ավստրիայի հանքային ու անտառային հարստությունների չահագործումը դժվարությունների յի գեմ առնում թեկուզ և այն պատճառով, վոր արդյունաբերության մի շարք ավստրիական ճյուղեր գտնվում են ոտարերկրյաց կապիտալի ձեռքերում։ Մտնապորապես ավստրիական անտառային արդյունաբերությունը պատկանում է բրիտանական կապիտալին։

Վերջապես, ապրանքների արտահանումն Ավստրիայից գերմանական եկոնոմիկայի համար լուրջ նշանակություն չունի նաև այն սբաժանություն, վոր մինչեւ Ավստրիայի ոկկուլտացիան ավստրիական եքսպորտի նշանակալից մասը Գերմանիան եր գնում։

Ավստրիան Գերմանիայի համար ունի վոչ այնքան ինքնարար նշանակություն, վորքան վոր հանդիսանում է վորպես յերակետ աղքեսիայի հետազա ակտերի համար հարավ-արևելյան Յեվրոպայում։

Գերմանական խմբերի վիստները Եքսպանսիայի լայն ոլոն

ունեն Բալկանյան թէրակղու և Մէրձավոր Արևելքի նկատմամբ։ Պատահական չէր, վոր Ռուբրի ածխարդյունաբերական լրագիր «Բէրգվերգայտունը» հենց նույն որը, յերբ գերմանական գորքերը ներխուժեցին Ավստրիայի տերիտորիան, հրապարակեց «Բէռլին—Բաղդադ» վերնագրով հոդվածը։ Հոդվածը նվիրված և սղային գծի բացմանը Բէռլինի և Բաղդադի միջև, սակայն իրականում ինքնին հանդիսանում և վորովես մի գեկլարացիա Երապանուիայի գերմանական պլանների վերաբերյալ Մէրձավոր Արեգելում։ Այս պլանները հարություն են տալիս մինչպատերադման, կայզերական Գերմանիայի նախագծերին։

Գերմանիայի կողմից ամենամեծ սպառնալիքի տակ ընկավ ներկայումս Զեխոսլովակիան, վորը Ավստրիան Գերմանիային միացնելուց հետո յերեք կողմից շրջապատված և Գերմանիայով։ Զեխոսլովակիան հանրապետության նկատմամբ գերմանական ֆաշիստների ունեցած դավթողական նպատակների մասին լիակատար անկեղծությամբ դրեթե ամեն որ պնդում են բեռլինյան լուսաբերն ու ֆաշիստական պարագլուխները։ Հասկանալի յե, հարձակվել Զեխոսլովակիայի վրա, իսկ առավել ևս բունագրավել այն նշանակալից չափով ավելի ծանր և, քան Ավստրիայի բունագրավումը։ Զեխոսլովակիան ամբողջ ժողովուրդը կապաշտապանի եր անկախությունը։ Զեխոսլովակիայում սաեղծված և ժամանակակից, լավ սարքավորված ամրությունների սիստեմ։ Զեխոսլովակիան ունի պաշտպանական ուժեղ արդյունաբերություն։ Այնուամենայնիվ գերմանական ֆաշիզմի աղքանիան անմիջականութեն սպառնում և Զեխոսլովակիային։

Գերմանական ֆաշիզմը, մի կողմից, նախապատրաստում և անմիջական սաղմական հարձակում Զեխոսլովակիայի վրա, իսկ մյուս կողմից, ծավալում եր քայլայիչ գործունեյությունը չեխոսլովակիան տերիտորիայի վրա։ Այս քայլայիչ աշխատանքի մեջ վորպես հենակետ ծառայում և Սուզետի մարզը, վորտեղ գերակշռում եր գերմանական բնակչությունը գերմանական ֆաշիստները ըստի քայլայիչ գործունեյությունը գերմանական ֆաշիստները փողարկել Սուզետի մարզի գերմանական բնակչության շահերի պաշտպանության դիմակով, սակայն գերմանական բնակչության դրությունն այս մարզում այնպիսին չե, վոր նակարիք ունենար գերմանական ֆաշիզմի խնամակալությանը։ Գերմանական փոքրամասնության դրությունը Զեխոսլովակիայում վոչ միայն ավելի վատ չե, այլ նշանակալից չափով ավելի լավ

և, քան Յեկըրպայի մյուս բուրժուական յերկըներսամ։ Զեխոս-սլովակյան կառավարությանը պրովինցիացիան պահանջներ առաջադրելով, գերմանական ֆաշիստները ամենից քիչ են մտածում սուլեւայան գերմանացիների վիճակի մասին։ Այս բանը նկատելի յե թեկուղ հենց նրանից, վոր գերմանական պահանջներին ընդառաջելու չեխոսլովակյան կառավարության փորձերն ամենեին ել չեն թեթևացնում գրությունը, վորովհետեւ գերմանական ազնատուրան Զեխոսլովակիայում լոկ ուժեղացնում ե պրովինցիաները, իսկ Բեռլինը՝ իր ճնշումը Պրադայի վրա։ Այս պայմաններում առանձին մանյովըներն ու զիջումները չեն կարող հեռացնել գերմանական սպառնալիքը Զեխոսլովակիայից։

Չուր չե, վոր Փրանսական հայտնի հրապարակախոս Պերտինաքը «Երուակ Նուովել» ժուռնալում մարտի 26-ին գրում եր, վոր Զեխոսլովակիայի վրկության համար պարտադիր նախադրյալ ե հանդիսանում Ֆրանսիայի ու Անգլիայի և մյուս խաղաղասեր պետությունների միավորումը, միավորում ադրեսորներին սանձահրելու համար՝ կոնկրետ պրակտիկ գործողությունների ողնությամբ։

Սակայն Գերմանիան սպառնում ե վոչ միայն հարավ-արևելյան Յեկըրոպային։ Անկասկած ե, վոր Փաշիստական Գերմանիան նորից ե զնում իր՝ արեելյան ուղղությամբ ունեցած աղքեսիվ պլանների իրականացման հարցը։ Ավստրիան բռնադրավելու որերին հենց Հիտլերը անդիմական ժուռնալիստ Ռուրլդ Պրայսի հետ ունեցած ինտերվյուի մեջ հայտարարեց, թե իրեն «առանձին ցավ և պատճառում» այն հանգամանքը, վոր Լեհաստանը գեալի ծովը յելք ունի գերմանական տերիտորիայի վրայով։ Այլ խոսքով, Գերմանիան ամենեին ել չի թողել այն միտքը, վոր իրեն վերադարձնի այսպես կոչված «լեհական կորիդորն» ու Դանցիբը, վորն առանց այն ել փաստորեն գտնվում ե գերմանական վերահսկողության տակ։

Լեհական մամուլը չվերաբարեց Հիտլերի այս հայտարարությունը, վորովհետեւ այդ բանը ձեռնառու չեր լինի Հիտլերի ազնատի համար Լեհաստանում, վորն այնտեղ գրավում և արտաքին գործերի մինիստրի պոստը։ Բեկը—Բեռլինի այդ գործակատարը—փորձեց ստեղծված իրազրությունից այլ յեզրակացություն անել։ նա պրովինցիայի յենթարկեց Լիտվայի հետ ունեցած կոնֆլիկտը։

Լեհական կոնֆլիկտը ծագեց չնորհիվ այն բանի, վոր

Լիտվայի տերիտորիան անցած լեհական զինվորը սպանվել եր լիտվական պահակի կողմից։ Դրանից անմիջապես հետո լեհական սահմանապահները յերկու անդամ փորձ արին գողանալ լիտվական պահակներին, ըստվորում այդ փորձերից մեկը հաջողությամբ սպահվեց։

Լեհ-լիտվական վեճը մեծ պատմություն ունի։ 1920 թվականին լեհական զեներալ Ֆելիխովսկին, վորպես թե սեփական ձեռներեցությամբ, բանադրավեց Վիլնյու քաղաքը, վորը լիտվական ժողովուրդը համարում է լիտվական պետության մայրաքաղաքը։ Այս թալանչիական ակտը ի կատար եր ածված լեհական պետության գլուխ Պիլսուդսկու ուղղակի ցուցումով։ Լիտվան չհամաձայնեց ճանաչել Վիլնյոյի խլումը, և 1920 թվականից սկսած Լիտվայի ու Լեհաստանի միջև խղվեցին գիշանադիտական հարաբերությունները։ Սահմանադիմը պետական սահմանի անուն չեր կրում, այլ կոչվում եր ժամանակավոր դեմարկացիոն գիծ։

Պրովոկացիայի յենթարկելով 1938 թվականին լեհ-լիտվական այս ժամանակավոր «դեմարկացիոն գծի» վրա ծագած կոնֆլիկտը, լեհաստանը լիտվային մի ուլումատում ներկայացրեց, վորով պահանջում եր դիմումատիական նորմալ հարաբերություններ սահմանել լեհաստանի ու լիտվայի միջև։ Այս պահանջն ընդունվեց լիտվայի կողմից և լիտվական կառավարությունն, անկասկած, ճիշտ վարվեց, վորովհետև գիշումատիական հարաբերությունների խցումը միջաղային վեճերը լուծելու նորմալ մեթոդ չի հանդիսանում։

Սակայն բանն ամենեին ել լեհաստանի ու լիտվայի միջև դիմումատիական նորմալ հարաբերություններ սահմանելու մեջ չե։ Կասկածի յենթակա չե, վոր լեհաստանը լիտվայի նկատմամբ նոր պլատկացիաների առիթներ եր միտուում և շարունակում է վիճակը։ Քանի վոր Գերմանիան ճգտում է թաթը գնել այսպես կոչված «լեհական կորիգորի» միջով լեհաստանի դեպի ծով գուրս գալու խնդրի վրա, լեհաստանը պատրաստվում է դեպի ծով բոիչք գործել լիտվայի ու Մեմելի վրայով։ Պարոն Բեկը զավթողական պլատմներին վարժվել է հենց Բեռլինում, և այժմ նա վճռել ե, ըստ յերեսությն, ցույց տալ, թե ինչի յե ընդունակ ինքն այս բնադրվառում։

Յեթե միազումարելու լինենք ազգեսիայի բոլոր վերջին ակտերը Յելբոպայում, ազա ընդհանուր առմամբ ստացվում է մի ամբողջական, թեկուղ և քիչ գրավիչ պատկեր։ Այն բանից հե-

տու, յերբ բրիտանական կառավարությունն իր փաստացի որհանությունը տվեց աղքանորների արտաքին-քաղաքական ավանդություններին, պատերազմի Փաշչիստական հրձիղների ըլոկն ուկոց Յեվրոպայում գործել յերեք ուղղությամբ. հարավ-արևմուտքում՝ ԽՍՀՄիանական նոր ուժեր փոխադրելու ճանապարհով, հարավ-արևելքում՝ Գերմանիայի կողմից Ավստրիան բանագրավելու ձևով և արևելքում՝ Լիտվայի դեմ լիհական արտելքի ձևով: Սրանում և կայանում Փաշչիստական աղքանությի նոր ետապի բնորոշ առանձնահատկությունը Յեվրոպայում. այդ աղքանության յերեան և գալիս միանդամից միքանի ուղղությամբ և սպանում և պատերազմի հրդեհը վառել ամրող Յեվրոպայում:

### ԿԱՊԻՏՈՒԼԱՅԻՍԻ ՊՏՈՒԽՆԵՐԸ

Կա՞ն արդյոք ինչ-ինչ լուրջ նշաններ այն բանի, վոր, համոզվելով այն ցավալի հետեանքների մեջ, վորոնց հասցրել եր բրիտանական քաղաքականության 1938 թ. փետրվարին իրագործված ըրջադարձը, Անդլիայի կառավարությունը կվերանայի արտաքին-քաղաքական իր բռնած կուրսը:

Այս հարցին ստիպված ենք պատասխանել բացասարար: Սրան հիմք և ծառայում մասնավորապես այն ծրագրային ճառը, վոր արտասանեց բրիտանական պրեմյեր Նեվիլ Չեմբլենը համայնքների պալատառում 1938 թ. մարտի 24-ին (այսինքն՝ արդեն իսկ այն բանից հետո, յերբ աղքանության բոլոր մասնանշված ակտերը տեղի ունեցին): Սրասանելով իր ճառը, Նեվիլ Չեմբլենը չեր կարող լիովին արհամարհել անգլիական այն հաստրակական կարծեքի արամարդությունները, վոր որբ-որին ավելի պարզորոշ կերպով եր դիտակցում աղքանությունների հետ համաձայնության դալու քաղաքականության ամրող փանգը: Չեմբլենը չեր կարող լիովին կուրսի վոր Անդլիան, յեթե նույնիսկ նա չներգրավվի ել պատերազմի մեջ, չի կարող խուսափել պատերազմի հետեանքներից: Այսպիսի հայտարարությունը պետք է վոր առաջ բերեր կոլեկտիվ անվտանգության և խաղաղության անբաժանելիության սկզբանքի կողմանակիցների հավանությունը: Սակայն Չեմբլենը հենց այստեղ ել ավելացրեց, վոր ինքը չի դիտում Ազգերի լիգան վորանս խաղաղությունը պահպանելու մի իրական գործիք: Այս հետեւթյունն, իհարկե, կարող եր բավարարել Փաշչիստական աղքանություններին միայն: Չեմբլենը

փաստորեն արտահայտվեց ընդում խաղաղասեր պետությունների միավորման և հենց գրանով հանգես յեկալ հոգուտ աղքասորների:

Չեմբեռունի մարտի 24-ի ճառի մեջ ամենաեյականը հանդիպանում էն նրա արտահայտած կարծիքները Չեխոսլովակիայի և Խոսպանիայի մասին: Ընդունելով, վոր Գերմանիան բացահայտ կերպով պատրաստվում և հարձակվել մի դեմոկրատական յերկրի վրա Յեվրոպայի կենտրոնում, անզլիական պրեմյեր-մինիստրը անկեղծորեն հայտարարեց, թե անզլիական կառավարությունը մտադիր չե ապահովել Չեխոսլովակիայի անվտանգությունը: Չժխտելով, վոր խոսքը հատկապես պատերազմի վտանգի մասին եւ, Չեմբեռունը հրաժարվեց խոչընդոտել այդ սպառնալիքի առաջացմանը: Ինքնին հասկանալի յի, վոր Չեմբեռունի այդ հայտարարությունը հրձվալից արձագանգներ գըտավ Բեռլինում, վորովհետեւ գերմանական ֆաշիզմի այդ բանի մեջ արդարացի կերպով տեսավ իր ադրեսիայի ուղղակի խրախուսումը:

Խոսպանական հարցի առթիվ ել Չեմբեռունը պակաս վորոշակությամբ չարտահայտվեց: Այն մոմենտին, յերբ գերմանո-իտալական ինտերվենցիան լայն հարձակում եր ծավալել Կատալիոնիայի վրա, յերբ Գերմանիայից ու Իտալիայից ամեն որ սպազմական նորանոր ուժեր ևն դալիս խոսպանական ժողովորդի գեմկովեր համար, Չեմբեռունն առանց քաշվելու բացատրում եր, վոր նա տվյալ մոմենտին չի պատրաստվում պահանջնել խոտական զորքերի հետկանքումը Պիրենեյան թերակղզուց:

Այսպիսով արձակելով Փաշիստական ադրեսորների ձեռքերը և փաստորեն ովնելով նրանց խեղդելու խոպանիային, բրիտանական կոնսերվատիվ վերնախառվը յենթադրեց, վոր այդպիսի քաղաքականությունը «բարենպատ իրադրություն» և ստեղծել քաղաքականությունը «բարենպատ իրադրությունների համար: Սահնդութարական անմիջական բանակցությունների համար: Սակայն բանն ել հենց նրանումն ե, վոր բրիտանական քաղաքազիկային հանուն ել հենց այն ցանցերի մեջ, վոր իր իսկ առությունը խճճվել ե հենց այն ցանցերի մեջ, վոր իր իսկ առաջցությամբ Փաշիստական դաշիճները ցանկանում են զցել հանգստեական խոպանիայի և ժողովրդական ֆրոնտի Ֆրանսիայի բարեկատական խոպանիայի և համար աղաքատություն ստանալով և հասկանալով, թե Չեմբեռունն ինչ աստիճանի շահագրգության մեջ, —Մուսոլինին վոչ անհցությունների հաջող ավարտման մեջ,—Մուսոլինին վոչ

ռանց Հիմքի յենթագրում և, վոր այժմ բրիտանական կառավարությունից կարելի յէ ձեռք բերել եյտական զիջումները: Իրոք, անդլո-իտալական բանակցությունների հանրագումարները վկայում են Անգլիայի իտակական կապիտուլացիայի մասին:

Անդլո-իտալական համաձայնությունը վերաբերում է վեց հիմնական հարցի: Համառոտ կերպով բնութաղընք այդ համաձայնության բովանդակությունը: Ամենից առաջ, Անդլիան պատրաստ ե ընդունելու, վոր իտալիան Միջերկրական ծովում «կենսական շահեր» ունի, քանի վոր իտալիան ընդունում է, վոր Անդլիան Միջերկրական ծովում «եյտական շահեր» ունի: Թեև առաջին հայացքից խոսքը կարծես թե դիմումատիական նրբությունների և բառախաղի մասին է, սակայն իրականում իտալական «կենսական» շահերը անդլիական «եյտական» շահերին հակադրելը նշանակում է վոչ այլ ինչ, քան յեթե Անդլիայի կողմից իտալական թեզիսն ընդունելը, այսինքն՝ յեթե իտալական շահերը Միջերկրական ծովում մեծ կշիռ ունեն, քան անդլիականները, ապա իտալիան բնական իրավունք ունի համակնել առնվազն նախատորմիոնների հավասարության, յեթե վոչ իր գերակշռության՝ անդլիական նախատորմիոնի վերաբերմամբ Միջերկրական ծովում: Հիմնվելով այն բանի վրա, թե ինքն իրավունք ունի պաշտպանելու վոչ միայն իր դիրքերն Աղբիական ծովում, այլև Անդլիայի կողմից ճանաչված իր «կենսական շահերը» Միջերկրական ծովի ամբողջ ավազանում, իտալիան կարող է հավակնել թե՛ վերահսկելու ծովային առևետական ճանապարհներին Միջերկրական ծովում և թե՛ կառուցելու ծովային բազաներ այն կետերում, վորոնք մինչև այժմ համարվում եյին ազգեցության իտալական սֆերայից գուրք գտնվողներ: Վերջապես, իտալիան իրավունք ունի հայտարարելու, թե ինքը չի կարող հաշտվել այն բանի հետ, վորպեսզի Միջերկրական ծովի մուտքն ու յելքը, վորտեղ կենտրոնացած են իր «կենսական շահերը», գտնվեն Անգլիայի ձեռքին: Այսուղից բղխում ե ուղղակի սպառնալիք թե՛ Զիբրալտարին և թե՛ անդլիական դիրքերին Սուեզի ջրանցքում:

Այսումենայնիվ, Սուեզի ջրանցքի հարցին ե նվիրված անդլո-իտալական համաձայնության յերկրորդ կետը: Յերկու կողմերն ել պարտավորվում են կատարել բոլոր պետությունների կողմից Սուեզի ջրանցքը ինչպես խաղաղ, նույնպես և պատերազմի ժամանակ աղատորեն ողտազործելու վերաբերյալ կոն-

վենցիան։ Յեթև հաշվի առնենք, վոր հարեւական պատերազմի ժամանակ Անդլիան հակվում էր այն բանին, վորպեսզի փակի Սուենգի ջրանցքը իտալական նախերի համար, ապա միանդամայն ակնհայտ է, վոր Հոռոմի հետ վարած վերջին բանակցությունների ժամանակ անդլիական կառավարությունն իր նախկին դիրքերից հետ նահանջեց։

Համաձայնության յերրորդ կետում իտալիան հայտարարում է, վոր Հարավային Արարիան ճանաչում է վորպես աղղոցեցության անգլիական սֆերա։ Սակայն Անդլիան վաղուց արդեն ամրացրել է իր գերքերը Հարավային Արարիայում, և իտալիան նվիրում է Անդլիային այն, ինչ արդեն պատկանում է վերջինիս։ Այս հարցի հետ կապված է համաձայնության 4-րդ կետը, վորը նախատեսում է բանակցություններ՝ Հարեւստանի և Տան լճի ըրջանին հարող բրիտանական տիրակալությունների միջև ճիշտ սահմանադեր սահմանելու նպատակով։

Անդլիան վոչ միայն ինքը ճանաչում է Հարեւստանի բոնապարտումն իտալիայի կողմից, այլև պարտավորում է այդ բըռնագրավման ճանաչումն անցկացնել Ազգերի լիդայով։ Անդլիան մի նոտայով արդեն դիմել և Ազգերի լիդային, առաջարկելով Հարեւստանի վերաբերյալ հարցը գնել Լիդայի Խորհրդի հերթական նատաշրջանի քննությանը։

Անդլիայի և իտալիայի միջև կայացած համաձայնության հինգերորդ կետը նախատեսում է դադարեցնել իտալիայի կողմից անդլիական բոլոր տերիտորիաներում, ինչպես նաև Անդլիայի վերահսկողության տակ գտնված յերկրներում մղվող հակարրիտանական պրոպագանդան։ Ինչպես հայտնի յե, իտալիան մինչև վերջին ժամանակներս ել վերին աստիճանի ակտիվ պրոտագանդա յեր մղում Անդլիայի գեմ Աֆրիկայի բրիտանական տիրակալություններում, և, անկասկած, նա լայնորեն ոգտվում էր այդ միջոցից՝ Լոնդոնի դեմ շանտաժ անելու նպատակներով։ Հանելով ցանկալի հետևանքների, իտալիան ժամանակավորապես հրաժարվում է ճիշտում գործ դնելու միջոցներից մեկի դորժադրությունից։

Իսկ ինչ վերաբերում է իսպանիային, ապա բրիտանական դիպլոմատիան բացահայտ կերպով որհնում է Մուսոլինիին հետադայում ել պատերազմերու խսպանական ժողովրդի դեմ։ Անդլիան հրաժարվեց այսպես կոչված վոլոնտյուններին—իտալական զորքերին իսպանիայից անհապաղ կերպով հետ կանչելու իր պա-

Հանջից : Նա բավարարվեց Մուսոլինիի խոստումով՝ զորքերն իսպանիայից դուրս տանել խռովարարների հաղթանակից հետո միայն :

Անգլիան վոչ միայն ինքն եւ համաձայնություն ստորագրել իտալիայի հետ, այլև Ֆրանսիային ել հրում եւ դեպի այդ ուղին : Ֆրանսական մինխարները հենց այդ նպատակով են հրավիրված Լոնդոն, վորտեղ նրանց վրա համապատասխան ճնշում կգործադրվի : Բրիտանական կառավարությունը կուղենար ստիպել Ֆրանսիային դավաճանելու վոչ միայն հանրապետական իսպանիայի, այլև իր սէփական շահերին :

Անգլո-իտալական համաձայնությունը վկայում եւ անգլիական իմպերիալիզմի կողմից Փաշիստական ագրեսորին արված նոր զիջումների մասին, և սա չնայած այն բանին, վոր պայմանավորվող կողմերի միջև ուժերի հարաբերակցությունը դասավորվում եւ վոչ ամենեին հոգուտ իտալիայի : Վերջինս վո՛չ պատերազմում և վո՛չ ել սպառազինումների վագրում յերբեք չե՛ կարողանա դիմանալ Մեծը բրիտանիայի մրցությանը :

Անգլո-իտալական համաձայնության հետևն արդեն սկսվում է պատկերվել տիրահաջոչակ «չորսի պակտի» կամ, ինչպես վո՞մանք ասում են, «Հնդի պակտի» ստվերը՝ Լեհարտանի մասնակցությամբ : Իսպանական հանրապետությունը խեղդելու դնով, նույնպես և Փրանսական շահերի բացահայտ խախտման դնով բրիտանական դիմումատիան փորձում և կյանքի կոչել ինչ-վոր «տերությունների համերգ», վոր գար փոխարինելու կունեկտիվ անվտանգության սիստեմին՝ Ազգերի լիգայի ըրջանակներում :

Անգլիան հույս ունի զիջումների միջոցով համաձայնության դաշտ ազգեսորների հետ, հարվածը հեռացնել իրենից : Անգլիայի կողմից արվող այդ բարոր զիջումները վորեւե միտք կարող ելին ունենալ, յեթե Անգլիան, Յեղրոպային հեղեղի բերան տալով և հանձնելով Փաշիստական ազգեսորների կողոպամանը, կարողանար հույս ունենալ, վոր ինքը ուազմական ցնցումներից մի կողմ կմնա : Այս դեպքում մենք գործ կունենայինք ցինիկ, շահամոլ, իսկական պնդաճակատ գիրքի հետ, սակայն այնուամենայնիվ մի այնպիսի գիրքի, վոր զուրկ չեւ հետևողականությունից ու արամարանական լինելուց : Սակայն բրիտանական քաղաքականության ներկայիս դեկալարները՝ նույնիսկ ըստ իրենց նեղ հայեցակետի, խոշոր հաշվեսխալ են անում :

Իսկապես, բրիտանական իմպերիալիստները կարող են ինչ

Համառությամբ ասես դեկլարացիս անել, թէ Անդլիսն մտադիր չե վո՛չ հող տանել ֆրանսական շահերի մասին Պիրենեյան սահմանում, վո՛չ ել ապահովել ֆրանսիայի ունեցած կապերն իրդաղութների հետ: Սակայն այնուամենայնիվ Ֆրանսիայի մեկուսացումն իր դաղութային բանակից նշանակում ե դրա հետ մեկտեղ կոնտինենտում Անդլիայի ունեցած փաստական դաշնակցի այնպիսի լուրջ թուլացում, վորն ուղղակի հարվածում ե Ծնդլիային:

Չեմքեռուենը կարող ե ամենաշխտակ անկեղծությամբ մերժել Զեխոսլիվակիային նրա անվտանգությունն ապահովելը՝ ընդդեմ գերմանական հարձակման: Սակայն նա չի կարող վոչընչացնել այն փաստը, վոր Ֆրանսիային պատերազմի մեջ քաջելը, կենտրոնական Յեվրոպայում Գերմանիայի կողմից նրա դաշնակցի վրա հարձակում կատարելու հետևանքով՝ անողոք անխուսափելիությամբ տանում ե դեպի այնպիսի սիսուացիս, վորի ժամանակ Անդլիան չի կարող մի կողմում կանգնած մնալ: Ֆրանս-գերմանական բաղխումը չի կարող չխախտել Փրանս-գերմանական սահմանները: Մինչդեռ Չեմքեռուենն ել չի ժխտում, վոր Անդլիան շահագրգռված ե Ֆրանսիայի անվտանգությամբ: Վորովհետեւ, ինչպես իր ժամանակին արտահայտվել ե անդլիական նախկին պրեմյեր Բոլդուինը, Անդլիայի սահմանը Յեվրոպայում անցնում ե Հունոսով:

Անդլիայում այժմ հաճախ մոռանում են, վոր պատերազմ հանուն աշխարհի վերաբաժանման՝ առաջին հերթին նշանակում ե սպառնալիք Մեծ Բրիտանիայի ամենահարուստ տիրակալություններին: Ֆաշիստական կողովատիչներն արդեն վաղուց են աչք տնկել Մեծ Բրիտանիայի գաղութների վրա Աֆրիկայում, նրա տիրակալությունների և աղղեցության սփերաների վրա Մերձավոր, Միջին ու Հնավալոր Արևելքում: Անդլիական կոնսերվատորները մտածում են աղքանուրին զիջումներ անելու միջոցավ, վորք ողետություններին նրան ի կեր հանձննելու միջոցով հարվածը հեռացնել իրենցից: Սակայն նրանք հակառակ նպատակի յեն հասնում, վորովհետեւ աջակցելու քաղաքականությունը տանում ե դեպի աղքանուրների անպատճելիության զդացմունքի ուժեղացումը, հետեւապես և դեպի առավել լայն զավթողական պլաններ երագործելու ձգտումը:

Հրաժարվելով կոլեկտիվ անվտանգության սկզբունքներից, ժամանակակից պարմաններում կիրառելով բրիտանական իմպե-

Հիմալիպմի հին՝ «բաժանիր և տիրիր» կանոնը, անգլիական քաղաքականության դեկավարներն իրականում միայն թուլացնում են իրենց սեփական դիրքերը: Բրիտանական կոնսերվատորների ներկայիս քաղաքականությունը վերջին հաշվով յերրոպական կոնտինենտին վոչ միայն մոտեցնում ե դեպի ռազմական կատաստրոֆան, այլ հենց միևնույն անդունդն է գլորում նաև Անդլիային իրեն:

### ՊՍ.Յ.Ք.Ս.Ր.Ն Ա.Գ.ՐԵՍԻՍ.Յ.ՅԻ ԴԵՄ ՅԵՎ. ՅԵՎ.ՐՈՊՍ.Կ.Ս.Ն ՌԵՍ.ԿՅԻՍ.Ն

Յեվրոպայում ստեղծված դրությունը խոսում է բուժուական դիպլոմատիայի սնանկացման մասին, պատերազմի ուժերի սանձալուծման մասին: Սակայն սրանից ամենելին չի հետևում, վոր պայքարն ապրեսիայի դեմ անհնարին ե: Ընդհակառակը, նրա դեմ կարելի յե և պետք ե տանել վճռական պայքար:

Այդ դրությի կարեսրագույն ապացույցներից մեկը հանդիսանում է այն դիրքը, վորը վերջին դեպքերի կապակցությամբ գրավել է Խորհրդային Միությունը: Այս դիրքն արտահայտված եր այն հայտարարության մեջ, վոր արել եր ընկեր Լիտվինովը 1938 թ. մարտի 17-ին մամուլի ներկայացուցիչներին: Այդ հայտարարության մեջ մասնավորապես ասվում է.

«Ներկայիս միջազգային դրությունը բոլոր խաղաղամեր պետությունների և առանձնասպես մեծ տերությունների առջև դնում է Յեվրոպայի ժողովուրդների, և վոչ միայն Յեվրոպայի, հետագա բախտի նկատմամբ նրանց պատասխանատվության հարցը: Խորհրդային կառավարությունը՝ գիտակցելով այդ պատասխանատվության մեջ ունեցած իր բաժինը, գիտակցելով նաև իր այն պարտականությունները, վոր բարում են Լիտայի կանոնադրությունից, Բըխան—Կելլոդի պակախից և Ֆրանսիայի ու Զեխուսլիվակիայի հետ՝ փոխադարձ ողնության մասին նրա կնքած պայմանագրերից, յես կարող եմ նրա անունից հայտարարել, վոր նա իր կողմից առաջլա նման պատրաստ և մասնակցել այն կուեկտիվ գործողություններին, վորոնք կորոշվեն նրա հետ միատեղ և վորոնք նախատակ կունենան կանգնեցնել ազգեսիայի հետագա զարգացումը և համաշխարհային նոր սպանդի աճող վտանգի վերացու-

մը: Խորհրդային կառավարությունը համաձայն ե անհապաղ մյուս տերությունների հետ միասին Ազգերի լիդայում կամ նրանից դուքս ձեռնարկել այն պրակտիկ միջոցառումների քննարկմանը, վոր թելադրում են հանգամանքները: Վաղը կարող ե արդեն ուշ լինել, սակայն այսոր գրա ժամանակը դեռևս չի անցել, յեթե բոլոր պետությունները, մանավանդ մեծ տերությունները, հաստատուն աներկմիտ դիրք կդրավեն խաղաղությունը կուլտիվորեն փրկելու պրոբլեմի վերաբերմանք»<sup>1</sup>:

Յեվրոպայում աղբեսիայի սանձարձակության իրադրության մեջ և Յեվրոպայի բուրժուական զեկավար կառավարությունների կապիտուլանտական քաղաքականության պայմաններում Խորհրդային Միությունը նորից ձայն բարձրացրեց հանուն պայքարի ակտիվ ու վճռական քաղաքականության ընդդեմ աղբեսիայի:

Խորհրդային կառավարության հայտարարությունը արտակարդ ուղղությամբ լսվեց ամբողջ աշխարհում և ամբողջ յերկրագնդի ժողովուրդներին ցույց տվեց, վոր Խորհրդային Միությունը հանդիսանում է վորպես մի հզոր Փակտոր պատերազմի վտանգի գեմ պայքարելու գործում:

Սնդվական պրեմյեր-մինիստրն իր ճառի մեջ ստիպված եր կանգ առնել Խորհրդային Միության առաջարկի վրա: Նա այդ առաջարկը մերժեց առանց բավականաչափ համոզեցուցիչ պատճառաբանության: Պարոն Զեմբենյանը հրաժարվում է մասնակցել գործողությունների համաձայնեցմանն «ընդդեմ ինչ-վոր հնարավորության, վորը, սակայն, դեռևս յերեան չի յեկել»: Թեև Զեմբենյանը մշուշապատ ձեռվ ե արտահայտվել, սակայն դժվար չե հասկանալ, թե խոսքն ինչի մասին ե:

«Հնարավորություն, վորը դեռևս յերեան չի յեկել», — լստ Զեմբենյանի տերմինուղղված այս ամբողջ աշխարհի առջև կատարվող աղբեսիայի ակտերն են, ժողովուրդների կամքի վրա բռնանալու ակտերը, ոտարների հողը զինված կերպով բռնադրավելը, խաղաղ քաղաքների ոմբակոծումը: Մարդ չկա, վորը չիմանար, վոր նման հնարավորությունն արդեն չարաբաստիլ իրականություն ե գարձել: Սակայն բրիտանական պրեմյերը, չնայելով ծանր դասերին, չի կամենում թողնել աղբեսորներին ուժանդակելու դիրքը:

1 Մ. Լիտվինով, Բնդպեմ աղբեսիայի, Եջ 62, Քաղհրատ, 1938 թ.:

Քրիստոնական կոնսերվատորների նպատակներն ու մտադրություններն արտահայտեց ավելի անկեղծորեն, քան նրանք իրենք այդ բանը կցանկանային, անդլիական ռեակցիոն հրապարակախոս Սկրուտեյտերը իր միջազգային տեսության մեջ «Անդեյ Թայմս» լրագրում (ս. թ. մարտի 20-ին): Չեփուլովակիայի անվտանգությունն ապահովելու և գրանով հենց կրիտիկական մումենտում ֆրանսիային ովնելու գործում Անդլիայի հրաժարվելը հիմնավորելու համար դիմելով վերին աստիճանի անձարակ և չփոթ պատճառաբանությունների, Սկրուտեյտերը՝ վորակես վերջին փաստարկ հայտարարում ե, վոր վերջին հաշվով «ուռւսական վտանգն ապագայում կարող է գերազանցել գերմանական վտանգին»:

Վորչափով նույնիսկ Սկրուտեյտերը չի փորձում պնդել, վոր կորհրդային Միությունն ուրիշների հողերը բռնագրավելու կամ ընդհանրապես արտաքին-քաղաքական աղբեսիայի ինչ-ինչ սլլաններ ունի, միանդամայն պարզ ե, վոր նա վոչ թե «ռուսական վասանգը» նկատի ունի, այլ այն ահազին վասանգը, վոր կապիտալիզմի համար ներկայացնում ե ինքնին հաղթանակած սոցիալիզմի յերկրի գոյությունը:

Վոչ մի կասկած չկա, վոր բրիտանական ռեակցիոններն իրենց դասակարգի համար վտանգ են տեսնում վոչ միայն սոցիալիստական յերկրի գոյության մեջ, այլև ժողովրդական ֆրոնտի ոգորչեմի լուսաբանությունը չի մահում ներկա աեսության շրջանակների մեջ: Սակայն, կարեւոր ե ընդգծել, վոր բրիտանական կոնսերվատորների քաղաքականությունը և ֆրանսական ռեակցիայի դավանանական մանյուլյունները միջազգային քաղաքականության հարցերում չեն կարող հասկացվել առանց հաշվի առնելու այն փաստը, վոր մասսաների հակաֆաշիստական շարժումն առաջ է բերում բրիտանական ու ֆրանսական ռեակցիոններների վախճ ու ատելությունը վոչ ավելի պակաս չափով, քան գերմանական ու խոտական ֆաշիստներինը:

Ժողովրդական ֆրոնտը—դա պայմանական է ընդգեմ ֆաշիզմի ընդգեմ ռեակցիայի: Ժողովրդական ֆրոնտի դրոշների ներքո գանգան պայմաններում ու գանապան ձեւերով միավորվում են ժողովրդական մասսաներն իսպանիայում, Ֆրանսիայում և աշխարհի ուրիշ յերկրներում: Ժողովրդական ֆրոնտի լողաւնդները մոտիկ են բոլոր ժողովուրդներին: Զի կարելի կովել ֆաշիզ-

մի դեմ, ազգերի ճնշման դեմ, պատերազմի դեմ, չհենվելով  
մասսաների կամքի վրա, վոր արտացոլված և ժողովրդական  
Փրոնտի մեջ: Սակայն խոշոր կապիտալիստական կլիկաները  
մասսաների շարժումից վախենում են, ինչպես ժանափաթից:  
Ժողովրդական մասսաների ակտիվությունը, թեկուղ և անմի-  
ջականորեն ուղղված լինի պատերազմի վտանշի դեմ և ամբող-  
ջապես զուգագիպի այս կամ այն յերկրի ազգային շահերին,  
խոշոր կապիտալի համար ավելի մեծ վտանգ է ներկայացնում,  
քան Փաշիզմի ամենակատաղի ուղղմական ագրեսիան:


Յեվրոպայում տեղի ունեցող մեծագույն տեղաշարժերի եպո-  
խայում, ուղղմական ահարկու վտանգի մամենտին բուրժուազիան  
պատրաստ և դավաճանելու սեփական ժողովրդին, դավաճանե-  
լու իր յերկրի ազգային շահերին հանուն մոնապոլիսատիկան կա-  
պիտուղի նեղ շահամոլ դասսակարգային շահերի: Այստեղից ել կա-  
պիտուղիացիաների բրիտանական քաղաքականությունը և Փրան-  
սական ռեակցիայի՝ ոլետական դավաճանության հետ սահմա-  
նուկցող ինտրիկները:

Գերջապես, հենց այս զուտ դասսակարգային նկատառում-  
ներով են սնվում յեվրոպական ռեակցիայի հաշվարկներն այն  
առթիվ, թե Փաշիստական ագրեսիան կհաջողվի ուղղել դեպի Ա-  
րևելք, ընդգեմ Խորհրդային Միության: Մինչդեռ ներկա մո-  
մենտում Յեվրոպայում ստեղծված դրությունը հզի յե ամենա-  
լուրջ վտանգներով ամենից առաջ արեւմտայելվողական պե-  
տությունների համար: Ֆաշիստական ագրեսորներն իրենց քա-  
ղաքականության կենտրոնում գրել են պատերազմի նախապատ-  
րաստումն ընդգեմ ԽՍՀՄ: Սակայն նրանք դիմուն Խորհրդային  
Միության հզորությունն ու գիտեն, վար, ի պարբերություն  
բուրժուական յերկրներից, Խորհրդային յերկիրը գտնվում է  
մշտական մորթիվացիոն պատրաստակունության մեջ, վոր նա  
տզած մոմենտին կարող կլինի հականարդած տալ թշնամուն:  
Ուստի և հակառակ ագրեսորների աջակիցների ու հօգանակոր-  
ների հույսերի, Փաշիստական ոլետությունները հատկապես  
ԽՍՀՄ դեմ պատերազմ նախապատրաստելու նպատակներով ներ-  
կա պայմաններում իրենց հարվածն ուղղում են նրանց դեմ, ով-  
քեր նրանց առջեւ կապիտուղացիայի յեն յենթարկվում: ԽՍՀՄ,  
ինչպես հայտնի յե ամբողջ աշխարհին, կապիտուղանաների թիվին  
չի պատկանում:

Ֆաշիստական կառավարությունների ազգեսիվ ավանդյու-

ըիստական քաղաքականությունը և յեվրոպական բուրժուազիայի առանձին խմբերի կազմականութանտական գալաճանական քաղաքականությունը, վորի շահերին տվյալ մոմենտում սղանուում և ֆաշիստական ազգեսիան, —այս բոլոր մամենաները միասին միջրած թուլացնում են բուրժուական Յեվրոպայի գեմոկրատական լադերը:

Այսպիսի սիտուացիան Յեվրոպայում լոկ ընդդժում է Խորհրդային Միության բացառիկ դրությունն ու բացառիկ գերը: Խորհրդային Միությունը միակ յերկիրն է, վորը վարում է խաղաղության հետեղական և անփոփոխ քաղաքականություն, վորը դիտե, թե ինքն ինչ ե ցանկանում և ովքեր են իր բարեկամները սահմանի մյուս կողմում: ԽՍՀՄ հետեւց ե գնում ամբողջ առաջավոր մարդկությունը: Նա հանդես ե գալիս վորպես խաղաղության զորեղ Փակտոր, պրոգրեսի Փակտոր, հաղթանակի Փակտոր:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Լոնդոնից տրված զարկը	3
Ինտերվենցիան Խաղանիայում	9
Ավստրիայի բռնագրավումը	16
Մեդալի հակառակ յերեսը	23
Ազրեսորների հետագա պլանները	29
Կապիտուլացիայի պոռուղները	34
Պայքարը ազրեսիայի դեմ և յեվրոպական ուսակցիան	40



*Արօն 2040*  
Թորդի. Ա.Տ.-Մկրտչյան  
Խմբագիր Վ. Փիթաշյան  
Տելմն. Խմբ. Ա. Խաչարյան  
Սրբագրիչ Հ. Մանվելյան  
Կոհուրու սրբագրիչ Լ. Աբովյան

Դավիթի լիազոր № 3305, հքառ. № 592

Պատվիր № 123, տիբաժ 7000

Հանձնված ե արտադրության 21/VII 1938 թ.

Ստորագրվել և ապագրելու 27/VII 1938 թ.

Գինը 50 կ.

Գևորգաստ—քաղաքական գրականության հրատարակչության տպարան  
Յերևան, Ալավերդյան № 65


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0016316

ԳԻՒԸ 58-4.  
-054-

401



9931

Е. АЛЕКСАНДРОВ  
ЧТО ПРОИСХОДИТ В ЕВРОПЕ?  
Армгиз—Издательство  
полит. литературы  
Ереван, 1938